ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԵԹՈԴ-ԲՅՈՒՐՈ

Պրոլետարներ բոլոր յերկների, միացեք!

ԲԱՄԲԱԿԱՔԱՂԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջադրություն (աշխատանքի նյութի հետ միասին) կուսլուսավորության գյուղական ցանցի համար

633.51
Ա-21

ԲԱԳՈՒ — 1931

17 SEP 2013

19-252

Гостипография „Красный Восток"
Азполиграфа В. С. Н. Х.
Баку, Карантинная, 84
Главлит 7533 Зак. 13745
Стат-формат. Б₃
Тираж 1000

633.51
Ա-21

26 SEP 2013

ԲԱՄԲԱԿԱՔԱՂԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պայքարը բամբակի համար հանդիսանում է կուսակցության հիմնական գծի համար պայքարի անբաժան մասը՝ Խորհրդային Միությունը սարսափելի կախումից ազատելու համար։

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի 1929 թ. հունիսի 18-ի վորոշման մեջ ասվում է, վոր՝

«բամբակաբուծության զարգացումը Միությունում ընթացիկ հնգամյակում պետք է ընթանա մեր բոլոր հնարավորությունների մեծագույն չափով արագացնելու գծով՝ բամբակային տարածությունների ընդլայնելու և բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար, այնպես, վորպեսզի հնգամյակի վերջում վոչ միայն Միության տեկստիլ արդյունաբերությունն ազատվի արտասահմանից ներմուծվող բամբակից, այլ և անհրաժեշտ ռեզերվ ունենա տեկստիլ արդյունաբերության հետագա ընդլայնման համար»։

Խորհրդային Միությունը վերջին 5 տարվա ընթացքում կես միլիարդ վոսկյա ռուբլուց ավելի է ծախսել արտասահմանյան բամբակ գնելու համար։ Այդ գումարը հավասար է Թուրքսիբի, Դնեպրոստրոյի, Ստալինգրադի տրակտորային գործարանի և մի շարք ելեկտրոկայանների արժեքին։

Բամբակի ծրագիրը իրականացնելով՝ մենք վոչ միայն ազատում ենք Խորհրդային Միությունը բամբակի հարցում արտասահմանից կախում ունենալուց, այլ և հնարավորություն ենք ստեղծում թեթև ինդուստրիայի շինարարության զարգացման համար՝ հայրենի հումքի բազայի վրա։

«Ինչ վերաբերվում է ապրանքների բացակայության, ապա մենք հիմա հնարավորություն ունենք ծավալելու թեթև արդյունաբերության հումքային բազան և առաջ շարժել մասսայական գործածության քաղաքային ապրանքների արտադրությունը»։ (ընկ. Ստալին— XVI համագումարում)։

Պայքարելով բամբակի համար, մենք հենց դրանով պայքարում ենք բանվորների, կոլխոզնիկների և բոլոր աշխատավորների մատակարարման հետագա լավացման համար։

Տնտեսելով վոսկյա վալյուտան, վորն անցյալում վատնվում էր արտասահմանում բամբակի գնելու համար, մենք հենց դրանով լրացուցիչ ռեզերվներ ենք ստեղծում ծանր ինդուստրիայի զարգացման համար, յերկրի պաշտպանությունն ամրապնդելու համար։

Բամբակի պլանի համար մղվող պայքարն ընթանում է կոլխոզների և սովխոզների ամրապնդման ու զարգացման հիման վրա՝ նոր տեխնիկայի արմատավորելու բազայի վրա, անհրաժեշտ պայմաններ ստեղծելով՝ բամբակային ռայոններում համատարած կոլլեկտիվացումն 1931 թ. ավարտելու և այդ հիման վրա կուլակությունը—վորպես դասակարգ՝ վերացնելու։

Բամբակի քաղը յեվ մթերումը հանդիսանում ե հասվեցվային—վնռական ետապը՝ բամբակի պլանի համար մղվող պայքարում։

Ամբողջ Անդրկովկասում դաշտերից հավաքել և գնման կետերին հանձնել 216.000 տոննն բամբակ, նրանցից 175.500 տոննն Ադրբեջանում, ամբողջ Ադրբեջանի և Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների պատվի խնդիրն ե հանդիսանում։

Բամբակի քաղը և մթերումը, ինչպես և բամբակի պլանի համար մղվող պայքարի առաջին ետապները (ցանքսը, մշակումը) անցնում են դասակարգային պայքարի սրված պայմաններում՝ դասակարգային թշնամու—կուլակի կատաղի դիմադրության և սաբոտաժի պայմաններում։

Վճռական պայքար կուլակի դեմ, կուլակության ագենտուրայի—ոպորտունիստների, և առանձնապես աջ ոպորտունիստների դեմ, վորոնք չեն հավատում բամբակային պլանի իրական լինելուն և վախենում են դժվարություններից, վորոնք իրենց աշխատանքը «կազմակերպում են» հույսը դնելով ինքնահոսի վրա, նույնպես և «ձախլիկների» դեմ, վորոնք մասսայական աշխատանքը փոխարինում են մերկ վարչարարությամբ, արհամարհում են մենատնտեսին—դրանում ե բամբակաքաղի կամպանիայի կարևոր խնդիրներից մեկը։

Պայքարել սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների, գնման կետերի ու բամբակազտիչ գործարանների բանվորական մասսաների, կոլխոզնիկների և մենատնտեսների, իսկ առաջին հերթին կոմունիստների, կոմյերիտականների, հարվածայինների, սոցմրցման և հարվածայնության կազմակերպման համար, սոցբուկսիրի՝ հետ մնացողներին ոգնելու, բամբակաքաղի և գնման կետերին հանձնելու պլանների կատարման և գերակատարման համար—դրա մեջ ե կայանում կուսլուսավորության ցանցի ունկընդիրների կարևոր խնդիրներից մեկը։

ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԱԾԻՆ ԴՐՈՒԹԹԸ

Ցուրացնելով գարնանացանի և մշակման կամպանիայի հաջողությունների հսկայական նշանակությունը, վորպես կարևոր ետապ բամբակի բերքի համար մղվող պայքարում, «Բամբակաքաղի կամպանիայի խնդիրների մասին» առաջադրության մշակման պրոցեսում անհրաժեշտ ե ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ լոզունգների շուրջը։

«Վոչ թե այն, ինչ վոր հավաքված ե, այլ այն, ինչ վոր հանձնված ե գնման կետերին ու բամբակային գործարաններին—վորոշում ե բամբակի համար մղվող պայքարի վերջնական արդյունքները»։

Ցուրացնել, վոր կարևոր պայմանը, վորը վորոշում ե բամբակաքաղի հաջողությունը—հանդիսանում ե.

ա) Բոլոր աշխատունակների բամբակի դաշտեր դուրս գալը։

բ) Կոլխոզների կազմակերպչական-տնտեսական կազմակերպումը։

գ) Սովխոզների բանվորների ու կոլխոզնիկների արտադրական ակտիվության զարգացումը։

դ) Բամբակաքաղի, բամբակի տեղափոխման և մշակման բոլոր աշխատանքների պրոգրեսիվ գործարքայնության փոխանցելը։

յե) Մենատնտեսների բամբակի քաղի ոգնության կազմակերպումը։

33696-62

զ) Վճռական ճնշում կուլակի վրա՝ հաստատ առաջադրությունները կատարելու համար։

Ղեկավարի (պրոպագանդիստի) խնդիրը կայանում ե—ոգնել ունկընդիրներին՝ յուրացնել բամբակաքաղի կամպանիայի տնտեսական-քաղաքական խոշոր նշանակությունը՝ վորպես բամբակի պլանի ավարտման ետապի, կուսակցության հիմնական գծի համար մղվող պայքարի, և ըմբռնել այն կոնկրետ խնդիրները, վորոնք դրված են տվյալ ետապում՝ նրանց առյոնի բամբակաքաղի կամպանիայում։

II. ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

1. 1931 թ. բամբակաքաղի պլանը Ադրբեջանում.
Աշխատանքի նյութ—1, 2, 3, 4, 5, 6.
2. Բամբակային սովխոզների մասին.
Աշխատանքի նյութ—7, 8, 9, 10, 11, 12.
3. 1932 թ. բամբակային ռայոնների համատարած կոլեկտիվացման համար. Կոլխոզների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման համար.
Աշխատանքի նյութ—13, 14, 15, 16, 17, 18, 19.
4. Աշխատանքի կազմակերպումը, պրոգրեսիվ գործարքայնությունը—ուշադրության կենտրոնում.
Աշխատանքի նյութ—20, 21, 22, 23, 24, 25, 26.
5. Մենատնտեսի «ձախ» բերագնահատման դեմ.
Աշխատանքի նյութ—27, 28, 29, 30.
6. Ուժգին սեղմել կուլակին.
Աշխատանքի նյութ—31, 32, 33, 34, 35.
7. Կազմակերպել գնման կետերի ու բամբակային գործարանների անընդհատ աշխատանքը.
Աշխատանքի նյութ—36, 37.
8. Բամբակի տեղափոխումն—բամբակաքաղի կարեվորագույն ողակն ե։
Աշխատանքի նյութ—38, 39, 40.
Պայքար կուլուսների դեմ—պայքար հատկության համար.
Աշխատանքի նյութ—41, 42, 43, 44.
10. Բազվի պրոլետարիատի ոգնությունը յեվ Հյուսիսային Կովկասի սոցբուկսիրը.
Աշխատանքի նյութ—45, 46, 47.
11. Անխնա պայքարել ոպորտունիզմի դեմ—յերկու ֆրոնտի վրա.
Աշխատանքի նյութ—48, 49, 50, 51, 52, 53, 54, 55.

Նյութեր բոլոր բաժինների համար

1. Ադրկոմկուսի (բ) կենտկոմի հոկտեմբերի 1-ի վորոշումը.
2. Ադրկոմկուսի (բ) կենտկոմի հոկտեմբերի 21-ի վորոշումը.
3. ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի հոկտեմբերի 25-ի վորոշումը։

Կոնտրոլային հարցեր

1. Ի՞նչ նշանակություն ունի բամբակը ժողովրդական տնտեսության մեջ։

2. Ինչու բամբակային պրոբլեմի լուծումը կապվում է բամբակային ռայոնների կոլեկտիվացման և բամբակային սովխոզների կազմակերպման հետ։

3. Ինչպիսի միջոցառումներ պետք է անցկացնել կյանքի մեջ, ժողպետի սովխոզները կատարեն 1932 թ. բամբակի իրենց պլանները։

4. Պատմեցեք ձեզ մոտ ինչպես է դրված աշխատանքի կազմակերպումը և ինչպես է մտցրված պրոգրեսիվ գործարքայնությունը և ինչ պետք անել դրանց կանոնավոր դնելու համար։

5. Ինչու մենատնտեսի թերագնահատումը մենք անվանում ենք ժողպետ ձախ շեղում բամբակաքաղի կամպանիայում։

6. Ի՞նչի մեջ է արտահայտվում մեր վերաբերմունքը դեպի կուլակությունը։

7. Ի՞նչ ձևերով է արտահայտում իրեն ոպորտունիզմը՝ բամբակաքաղի կամպանիալի պրոցեսսում։

8. Ինչ պետք անել բամբակի հանձնման հոկտեմբերյան պլանի չկատարելը վերացնելու ու աշխատանքները ժամկետին վերջացնելու համար։

(Աշխատանքի նյութ № 1-ը տես 7-րդ էջ)։

1.—Ներկա գյուղատնտեսական տարվա արդյունքները մեզ թույլ են տալիս ամրապնդել թեթև ինդուստրիայի հումքային բազան, և հենց դրանով առաջ մղել նրա զարգացումը՝ մինչև որս չտեսնված տեմպերով։ Դա, իր հերթին, պետք է կարճ ժամանակամիջոցում բարելավի բանվորական մասակարարումը։ Դրված խնդիրները պահանջում են ամենալարված աշխատանք՝ տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի և մթերումը վերջացնելու համար։

Գյուղատնտեսական հումքի ռայոնների կուսակցական կազմակերպությունները պետք է պարզ ըմբռնեն քաղաքական պատասխանատվությանը ամբողջ ուժը, որը ընկնում է նրանց վրա՝ տեխնիկական կուլտուրաների բերքահավաքը և մթերումը կազմակերպելու գործում։

Բանվոր դասակարգի նյութական-կենցաղային պայմանների մեծագույն չափով բարելավելու խնդիրը պահանջում է իր ժամանակին թեթև արդյունաբերությունը ապահովել հումքով։

Մերը յերկիր արտասահմանից կախում ունենալուց ազատելու—գյուղատնտեսական հումքի մասում—խնդիրը ուժեղ կերպով թելադրում է տեխնիկական կուլտուրաների բերքի 100-տոկոսային իրացման, ամբողջ հումքային արտադրանքն իր ժամանակին պետությանը հանձնելու անհրաժեշտություն։ («Պրավդա»—10 հոկտեմբեր)։

2.—Մենք մտել ենք 1931 թ. բամբակային պլանի կատարման պայքարի վճռական ետապի մեջ։

Վերջերս հրատարակված Աղրկոմկոսի (բ) կենտկոմի և Խորհրդային Աղբբեջանի Ժողկոմխորհի միատեղ վորոշումը բոլշևիկյան պայքարի ծավալուն ծրագիր է հանդիսանում՝ ընթացիկ տարվա բամբակային կամպանիայի հաջող ավարտելու և բազա պատրաստելու՝ Խորհրդային Միության բամբակային անկախության համար մղվող պայքարի հետագա հաջողությունների համար։

Քաղել և մթերել 175.500 տոն հնդավոր բամբակ, այսինքն, յերեք անգամ ավելի, քան թե մթերված եր անցյալ տարվա բամբակային կամպանիայում. կոլխոզների կազմակերպչական տնտեսական ամրապնդման հիման

Աղյուսակ № 1.

1. Բամբակի մթերումն 1931 թ. պլանը

Ռայոնների անունները	Ամառ ռայոնների				Հոկտեմբերում				Զրադարա-միջակ. տնտես.				Կուլակ-տնտեսություն			
	Ամառվա ընթացքում մթերված բամբակի քանակը	Ամառվա ընթացքում մթերման պլանի %	Ամառվա ընթացքում մթերված բամբակի քանակը	Ամառվա ընթացքում մթերման պլանի %	Հոկտեմբերում մթերված բամբակի քանակը	Հոկտեմբերում մթերման պլանի %	Հոկտեմբերում մթերված բամբակի քանակը	Հոկտեմբերում մթերման պլանի %	Զրադարա-միջակ. տնտես. մթերված բամբակի քանակը	Զրադարա-միջակ. տնտես. մթերման պլանի %	Զրադարա-միջակ. տնտես. մթերված բամբակի քանակը	Զրադարա-միջակ. տնտես. մթերման պլանի %	Կուլակ-տնտեսություն մթերված բամբակի քանակը	Կուլակ-տնտեսություն մթերման պլանի %	Կուլակ-տնտեսություն մթերված բամբակի քանակը	Կուլակ-տնտեսություն մթերման պլանի %
Ծպատուն	3195,5	—	3195,0	7,06	2840	7,1	1760,8	8,26	6865	6,9	466,8	7,7	39	7,7	30,0	8,62
Ազդամի	15681,0	113	15568,0	8,03	7643	8,11	6198,5	100479,8	7199	7,88	5672,8	8,8	726	8,8	638,9	6145,2
Գյուլիստանի	9633,0	—	9633,0	9,19	6022	8,29	4992,2	65139,5	2114	7,91	2463,2	8,8	497	8,8	437,4	7,77
Գյորչայի	19468,0	1380	18088,0	8,12	8905	8,27	7364,4	50622,7	8517	7,91	6736,9	8,9	666	8,9	592,7	7132
Բեյլասուվարի	8070,0	—	8070,0	6,91	3337	7,0	2335,9	631	4102	6,75	2768,8	7,5	631	7,5	473,2	8,62
Մայլանի	13559,0	563	12986,0	7,16	9623	7,2	5628,6	2752	6,9	1903,0	615	7,8	615	7,8	479,7	10,2
Մարգի-Ալարդի	18009,0	—	18009,0	7,04	7838	7,2	5643,4	9397	6,85	6436,9	774	7,7	774	7,7	596,0	10,0
Ալի-Բայրամլի	11014,0	1307	9707,9	7,03	6509	7,1	4621,4	2932	6,85	2008,4	266	7,6	266	7,6	202,2	85,0
Զարգելի	14069,0	—	14069,0	7,01	8713	7,1	6186,9	4719	6,75	3185,3	637	7,6	637	7,6	484,1	6145,2
Թարդի	5593,9	—	5593,0	8,25	4615,9	8,3	3420,4	1259	7,99	1005,9	213	8,9	213	8,9	189,5	8,62
Շամխորի	2876,0	—	2876,0	9,07	2608,9	9,17	1519,5	1057	8,8	938,9	152	9,9	152	9,9	150,5	8,62
Դաստաֆարգայի	7814,0	448	7366,0	8,87	6534,8	9,0	3423,6	3439	8,7	2991,9	123	9,7	123	9,7	119,3	10,2
Մամուլեի	8154,0	—	8154,0	9,45	7709,6	9,5	6272,9	1480	9,2	1361,6	71	10,2	71	10,2	72,4	10,0
Գյանջայի	2324,0	—	2324,0	9,43	2192,5	9,5	1724,3	509	9,2	468,3	—	—	—	—	—	85,0
Ազդամի	4593,0	—	4593,0	9,47	4350,3	9,5	3746,8	585	9,2	538,2	64	10,2	64	10,2	65,3	8,62
Թարթառի	4568,0	108	4460,0	8,61	3859,5	8,6	3402,2	314	8,3	260,6	190	9,3	190	9,3	176,7	9,2
Բարդայի	7135,0	—	7175,0	9,00	6121,5	9,0	5697,9	629	8,75	550,4	175	9,9	175	9,9	173,2	10,0
Աղվաբերդի	11837,0	753	11084,0	9,01	9986,2	9,0	9050,4	712	8,75	623,0	316	9,9	316	9,9	312,8	11,0
Կարամարյանի	7970,0	—	7970,0	9,97	7947,1	10,0	6297,1	1463	9,7	1419,1	210	11,0	210	11,0	231,0	8,9
Ջաֆար-Ալարդի	3773,0	—	3783,0	8,12	3062,8	8,27	1316,6	1969	7,91	1557,5	212	8,9	212	8,9	188,7	7,6
Ալ-Սալ.	623,0	—	623,0	6,95	433,0	7,0	252,8	236	6,8	160,5	26	7,6	26	7,6	19,8	8,8
Կարլագերի	1250,0	41	1209,0	8,19	990	8,29	532,9	448	7,91	354,4	94	8,8	94	8,8	82,7	7,7
Ջիբրայլի	2359,0	—	2359,0	6,99	1650,2	7,0	1507,8	172	6,8	117,0	33	7,7	33	7,7	24,4	7,7
Ջանգիսանի	1200,0	73	1136,0	6,96	790,7	7,0	602,7	253	6,8	178,8	12	7,7	12	7,7	9,2	—
Կուսարի	1100,0	30	1070,0	6,90	738,3	6,9	738,3	—	—	—	—	—	—	—	—	—
Ջաբրայլի	1066,0	—	1066,0	7,97	849,2	347	281,4	706	7,88	555,5	14	8,8	14	8,8	12,3	9,2
Մարտունի	3103,0	—	3103,0	8,39	2603,2	1459	8,53	1244,5	1537	8,2	1260,3	9,2	107	9,2	98,4	10,8
Նախ. հանրապետություն	6925,0	1683	5242,0	6,85	5165,3	2010	10,0	2010,0	3048	9,7	2956,6	10,0	184	10,8	198,7	10,0
Գումարը	3450,0	—	3450,0	9,14	3153,6	1475	9,4	1386,5	1890	8,9	1682,1	8,62	85	10,0	85,0	6145,2
	200120,5	6499	193921,5	8,11	157247,7	121650	8,26	100479,8	65139,5	7,77	50622,7	7132	8,62	6145,2		

վրա ուժեղացնել կոլխոզային շարժման աճումը և ապահովել համատարած կոլլեկտիվացումը և, դրա հիման վրա, վերացնել կուլակությունը, որպես դասակարգ—հիմնական բամբակային ռայոններում 1931 թ.—այդպես և կուսակցության և կառավարության մարտական առաջադրությունը, որի շուրջը պետք է մոբիլիզացիայի յենթարկել բամբակային ռայոնների բոլոր կենտրոնական և ռայոնական կազմակերպությունների բոլոր ուժերն ու միջոցները։ («Բակ.-Բաբոչի» առաջնորդողից)։

3.—1931 թ. փետրվարի 24-ի տվյալներով ամբողջ Ադրբեջանում 1930 թ. բամբակի բերք և հավաքված 52.000 տոնն, որը հաստատված պլանի 43%-ն է կազմում։

1931 թ. բամբակի բերքի պլանը—175.5000 տոնն—3½ անգամ գերակշռում է անցյալ տարվա մթերածից։

Բամբակաբուծական ռայոններում սոցիալիստական սեկտորի նշանավոր չափով գերակշռումը, բամբակային ցանքսերի տարածության աճումը, առաջիկայում հավաքելու հնդավոր բամբակի ահագին աճումը բացառիկ նշանակություն են տալիս բամբակաքաղի և մթերման կամպանիային, որը պետք է տարվի ժողովրդա-տնտեսական կարևոր խնդրի լուծման—Խորհրդային Միությունը բամբակի հարցում արտաքին հմանից կախում ունենալուց ազատելու նշանաբանի տակ։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի վորոշումից)։

4.—Բամբակի մասսայական հասունանալը մեզ դրել է բամբակաքաղի կամպանիայի կազմակերպման գործում սուր կերպով հետ մնալու փաստի առաջ։

Կնդուղների մասսայական բացումը,—որը միջին թվով բերքի 40—50% է հասնում,—ամբողջ պարզությամբ բացեց սկզբում նախագծված բամբակաքաղի իսկական անհրաժեշտ տեմպերից չափազանց հետ մնալը։

Սուր կերպով հետ մնալը, որը հետևանք է անթույլատրելի ուշացման, իսկ առանձին դեպքերում, իր ժամանակին բամբակաքաղի և մթերման նախապատրաստության տապալման, ներկայումս ամբողջ սրությամբ առաջ է քաշվում հիմնական խնդիրը.—անմիջապես շաղկապել բոլոր կենտրոնական և ռայոնական կազմակերպությունների աշխատանքները, որոնք կապված են բամբակաքաղի և մթերման գործում, և անցել աշխատանքի այնպիսի տեմպերի, որոնք լիովին ապահովեն կենտկոմի դիրեկտիվի իրացումն այն մասին, որպեսզի «բամբակի մթերումն ու հանձնումը կատարվի նոյեմբերի 1-ին տարեկան պլանի 70—80%-ի չափով, վճռականորեն պայքարելով տեղափոխման յեվ հանձնման ժամանակ յեղող կորուստների դեմ»։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

Հոկտեմբերի առաջին կեսը բամբակի մթերման պլանի իրացման խայտառակ թվանշաններ տվեց. հավաքված է միայն 16% տարեկան պլանի, որը սեպտեմբերին հավաքվածի հետ տալիս է միայն 26%, այն ինչ, նոյեմբերի 1-ին պետք է կատարվեր տարեկան պլանի 70—80%։ Առանձնապես հետ են մնում սովխոզները, որոնք կատարել են տարեկան պլանի 7%-ը, այն ժամանակ, յերբ կնդուղները բացվել են 70-80-ով։ Ամենից վատ է կուլակային սեկտորի գործը, որը մինչև հոկտեմբերի 15-ը տվել է 3—4%, որը հանդիսանում է քաղաքական կուրության անմիջական հետևանք, գործնականում ոպորտունիզմի վատ տեսակը, տեղական կուսակցա-

կան, խորհրդային և ուրիշ կազմակերպությունների անգործունեության հետևանք։ Դա ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի դիրեկտիվների ուղղակի խախտումն և նրանց կատարելու չկամություն։

Նոյեմբերի առաջին կեսի ծրագրի տապալումը ցույց է տալիս, որ մի քանի ռայոնական կազմակերպություններ չեն իմանում պայքարել բամբակաքաղի բոլշևիկյան տեմպերի համար, չեն կարողանում մարտական կերպով մոբիլիզացիայի յենթարկել կուսակցական և կոմյերիտական մասսաներին, չեն կարողանում գլխավորել կոլխոզային ու չքավորա-միջակային մասսաների աճող ակտիվությունը, չեն կարողանում աշխատանքները վերակառուցել՝ ընթացիկ խնդիրների համապատասխան, «նոր ձևով աշխատել», ղեկավարել կոնկրետ և ոպերատիվ կերպով, վճռականորեն վերացնելով բյուրոկրատիզմի տարրերը և պատասխանատվություն պահանջել հանձնարարված աշխատանքի համար։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադի զեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

2. ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

6.—Հաստատված պլանով բամբակային սովխոզները պարտավոր են պետությանը հանձնել 17,132 տոնն հնդավոր բամբակ։ Դա Ադրբեջանում բամբակի հավաքման և մթերման ամբողջ պլանի մոտ 10%-ն է կազմում։

Հիմնականում ցանքսի պլանը հաջող իրագործող (առանձին սովխոզները—Միլիի, Կարա-Զալա—նույնիսկ գերակատարել են իրենց պլանները՝ պլանից մոտ 1000 հեկտար ավելի ցանելով)—սովխոզները նշանավոր չափով հետ եին մնում մշակման ժամանակ։

Բամբակային սովխոզների մշակման կամպանիայում հետ մնալու հիմնական պատճառներից մեկը՝ բանվորական ուժի պակասությունն եր։ Աշխատողկոմի որգանները, պրոֆմիությունները, կոմսոմոլը, կուսակցական կազմակերպություններն ու ռայոնների գործկոմները, որոնք պետք է սովխոզներին բանվորական ուժ մատակարարեին, նույնպես և իրենք սովխոզները, չկարողացան բանվորական ուժն ամրապնդելու գործը կազմակերպել՝ կոլխոզների ու մենատնտեսների հետ պայմանագրության հիման վրա։

Սովխոզների տնտեսական ու հասարակական կազմակերպությունները համապատասխան կերպով չկարողացան բանվորական ուժի ամրապնդման գործը կազմակերպել։

Բացառիկ խայտառակ վերաբերմունք,—որը սահմանափակվում է վնասարարությամբ—դեպի բանվորների կուլտուր-կենցաղային կարիքները—ել ավելի ուժեղացրեց բանուժի հոսունությունը սովխոզներից։

Այսոր մենք հրապարակում ենք սովխոզների համար բանուժ հավաքելու տեղեկությունը։ Այդ տեղեկությունը բացատրությունների կարիք չի զգում։ Կուսակցության ռայոնական կոմիտեները, ռայոնական գործկոմները, պրոֆմիութենական և կոմսոմոլական ռայոնական կազմակերպությունները, որոնք չեն կատարել սովխոզների համար բանվորական ուժ հավաքելու կուսակցության և կառավարության առաջադրությունը, պետք է հասկանան, որ նրանք իրենց դանդաղկոտությամբ կանգնում են ոպորտունիստների առաջին շարքումն և սովխոզների բամբակային պլանների վիժումն են նախապատրաստում։

Սովխոզների համար բանվորական ուժ հավաքելու ամեն մի սրվա դանդաղումն, ինքնահոսի վրա հույս դնելը—դա տասնյակ, հարյուրավոր և նույնիսկ հազարավոր տոննա բամբակ է, վորը կարող է վոչնչանալ բամբակային սովխոզների դաշտերում՝ իր ժամանակին չհավաքելու պատճառով։

Սովխոզների տնտեսական, կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունները դրա հետ միասին պետք է վճռականապես վերակառուցեն աշխատանքները՝ ընկ. Ստալինի ցուցմունքների հիման վրա, մի շարք վճռական միջոցներ ձեռք առնեն՝ աշխատանքի կազմակերպման, ամբողջ աշխատանքները գործարքայնության անցկացնելու, բրիգադները վորոշ քաղի տարածությունների ամրապնդելու, այնպես, վորպեսզի վերացնվեն անդիմությունն ու հավասարանքը և ամրապնդվի բանվորների նոր հոսանքը՝ բամբակաքաղի կամպանիայի ամբողջ ժամանակամիջոցում և սոցմրցման և հարվածայնության հիման վրա անպայման ձեռք բերվեն բամբակաքաղի պլանի կատարումն ու գերակատարումն։ («Բակ.-Բաբոչի» թերթի հոդվածից)։

7.—Անդրբամբակմիացությունն անմիջապես պետք է սովխոզներում բանվորական ուժի ներկայության քանակությունը նշի, ճգրիտ կերպով պարզի ամեն մի առանձին սովխոզի պակասող բանուժի չափը։ Պարտավորացնել սովխոզների դիրեկտորներին՝ կոլխոզների հետ պայմանագիր կնքելու հիման վրա, ժամանակին ավարտել բանուժի հավաքելու գործը՝ բերքահավաքի կամպանիայի պլանը լիովին կատարելն ապահովելու համար։

Անդրաշխժողկոմը Անդրբամբակմիացության և Անդրկոլխոզկենտրոնի հետ միասին հինգ որվա ընթացքում պետք է վորոշեն բանուժ հավաքելու ռայոնները։ Բանուժ հավաքելու ռայոնների ռայկոմներն ու ռայգործկոմները, նույնպես և ռայոնների կոլխոզային սիստեմը պետք է ամենայն աջակցություն ցույց տան բամբակային սովխոզների այդ աշխատանքին։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

8.—Առաջարկել բամբակային սովխոզների դիրեկտորներին, մատնանշված ռայոնների ռայգործկոմների ու ռայկոմների հետ միասին սեպտեմբերի 15-ից վոչ ուշ ավարտել կոլխոզների հետ պայմանագրեր կազմելը՝ բամբակաքաղի կամպանիայի ընթացքում բանուժ մատակարարելու մասին։ (Աղրկոմկուսի (բ) Կենտկոմի և Աղրժողկոմխորհի նոյեմբերի 1-ի վորոշումից)։

9.—Ինչ է ասում մեջ բերված տեղեկությունը։

Նախ և առաջ, բամբակաքաղի գործում սովխոզային սեկտորի սուր կերպով հետ մնալու մասին։ Այն ժամանակ, յերբ Աղրբեջանում ընդամենը հավաքված է տարեկան պլանի 8,5%-ը, սովխոզները կատարել են միայն 2,5%։ Այստեղ հիմնական պատճառները թաղնվում են բանուժի պակասության մեջ։ Բամբակը սովխոզային դաշտերում կարող է փչանալ, յեթե ռայոնական կազմակերպությունները, վորոնք պարտավորվել են սովխոզներին բանուժ տալ, յեթե բանուժ հավաքելու խնդիրը՝ բամբակի պլանի համար մղվող իրենց պայքարի կենտրոնը չդարձնեն, յեթե պրոֆմիութենական և շեֆային կազմակերպությունները տանտիրուհիների, բանվորների կանանց հավաքելու բոլշևիկյան տեմպեր չծավալեն՝ նրանց ուղարկելու սովխոզներում բամբակ հավաքելու համար։ Բազմի ձեռնարկների կուսակցական,

պրոֆմիութենական և կոմյերիտական կազմակերպությունները հենց այսոր և յեթ պետք է քննության առնեն, թե նրանք սովխոզներին կոնկրետ ինչ ոգնություն կարող են հասցնել, զուգակցելով այս ընկ. Ստալինի դիրեկտիվների իրացման մասսայական ինքնաստուգման հետ և կոնկրետ ոգնություն հասցնելով սովխոզներին այդ դիրեկտիվների իրացման համար, վերացնելով անդիմությունը՝ ուղղակի պրոդրեսիվ գործարքայնություն մտցնելով։ («Բակ.-Բաբոչի» թերթից)։

10.—Սովխոզների մասին.—Այն ժամանակ, յերբ Աղրբեջանում ամբողջ աճումը հոկտեմբերի 20 որվա ընթացքում կազմում եր մոտ 19%, իսկ կոլխոզային սեկտորում 20,4%—սովխոզները ավել են տարեկան պլանի միայն 9,3%։

Պլանի ընդհանուր կատարման ժամանակ նշած 3,04%-ից, վերջին տվյալներով սովխոզները կատարել են տարեկան պլանի միայն 12%։ Այդ պայմաններում վոչ մի սովխոզ վոչ միայն չի ապահովում հոկտեմբերյան պլանի կատարումը, այլ վիժման վտանգի տակ է դնում ամբողջ տարեկան պլանը։

Ինքնահոսի վրա ոպորտունիստական հուսադրումը— կոլխոզներում կազմակերպված կերպով բանուժ հավաքելու և մենաանտեսների հետ կոնտրակտացիոն պայմանագիր կնքելու փոխարեն—բյուրոկրատական-չինովնիկական վերաբերմունք դեպի բանվորների կենցաղային կարիքները (բարակների կառուցումը, հասարակական սննդի կազմակերպումը՝ համաձայն հավաքած ընիկ ազգության պահանջների), անթույլատրելի դանդաղկոտություն՝ բամբակի հավաքման և տեղափոխման ամբողջ աշխատանքներն ուղղակի անսահման գործարքայնության անցնելում—ահա ինչի մ ջ է գտնվում սովխոզների տնտեսական, պրոֆմիութենական և կուսակցական կազմակերպությունների, ռայկուսկոմների ու ռայգործկոմների սխալը, վորոնց տերիտորիայի վրա Անդրսովխոզբամբակի բամբակային սովխոզներն են գտնվում։

Բամբակաքաղի այսորվա դրությունը սովխոզներում՝ պահանջում է վճռական միջոցներ ձեռք անել։

Կոմսոմոլը պարտավոր է առանց առարկելու իրացնել կոմյերիտականներին բամբակաքաղի համար հավաքելու դիրեկտիվը։ Այն կոմյերիտականը, վոր մերժում է մեկնել սովխոզները բամբակ հավաքելու համար—նա կուսակցության հիմնական գծի համար մղվող պայքարի ֆրոնտի դասալիքն է։

Աղրպրոֆխորհուրդն ու յերկրագործական սովխոզների աշխատավորների միությունը պարտավոր են բամբակի սովխոզներին տալ բրիգադների լավ կազմակերպիչներ, նորմայացնողներ, ամեն կերպ աշխատեն, վորպեսզի բամբակաքաղի ամբողջ աշխատանքները պրոդրեսիվ գործարքայությամբ տարվեն, և խուտորներում, հոդամասերում, քաղող բրիգադների մեջ խիստ սոցմրցում և հարվածայնություն ծավալեն։

Մատակարարման Ժողկոմատի, Աղերիատիֆակի, Ագկոոպերատի կուսակցական բջիջներն անմիջապես պետք է մարդիկ առաջ քաշեն և սովխոզներն ուղարկեն նրա համար, վորպեսզի ապահովեն հասարակական սննդի իսկական անհրաժեշտ կազմակերպումը։

Կուսակցության ռայոնական կոմիտեները, սովխոզների կուսբջիջները պետք է անմիջապես զբաղվեն ուժերի ռացիոնալ դասավորելու գործով, այնպես, որպեսզի սովխոզներում բամբակաքաղի բոլոր հողամասերում զուսպեկավարությունը ապահովեն։

Անմիջապես պետք է սկսել լավ հարվածայիններն, բրիգադներն մրցանակներ տալ—և այդ մրցման հիման վրա կազմել բամբակային պլանի իրացման լավագույն ցուցանիշները։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

11.—Ճեղքվածները սովխոզներում բացատրվում է Սովխոզբամբակի, ռայոնական կազմակերպությունների, դիրեկտորների, սովխոզների կուսակցական և պրոֆկազմակերպությունների անգործունեությամբ ու անուշադիր վերաբերմունքով, որոնց պատճառով չի կատարված բնակարանային շինարարությունը, խայտառակ դրության մեջ է գտնվում մատակարարումը, բացակայում է աշխատանքի կազմակերպումը և չկա մասսայական աշխատանք։ Նմանապես խայտառակ դրության մեջ է գտնվում բանուժ հավաքելու և ամրապնդելու գործը, որի մեջ հանցավոր են նույնպես Աշխժողկոմը և կոմսոմոլը։ Նման դրությունը չի կարող անպատիժ մնալ։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադի ղեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

3. 1932 Թ. ԲԱՄԲԱԿԱՔԱՂԻՆ ՌԱՅՈՆԻ ՀԱՄԱՏԵՍՔԱԾ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ. —ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

12.—Բոլոր կազմակերպությունների բաղմակողմանի պատրաստությունը՝ բամբակաքաղի և մթերման կամպանիայի համար, կոլխոզների և չքավորա-միջակային մասսաների ամեն արտաքին ենտուզիազմը լիովին ոգտագործելով, կուլակի դիմադրության դեմ վճռական պայքար մղելով—կապահովեն բամբակի մթերման կամպանիայի հաջող ընթացքը, նոր թափ կան կոլլեկտիվացման բնագավառում և կարագացնեն բամբակային ռայոնները համատարած կոլլեկտիվացման ռայոններ դարձնելը և այդ հիման վրա կուլակության՝ որպես դասակարգի՝ լիկվիդացիան։

(ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

13.—Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը և Խորհրդային Ադրբեջանի Ժողկոմխորհը բոլոր կենտրոնական և ռայոնական կազմակերպությունների ուշադրությունն են հրավիրում առաջիկա բամբակաքաղի և մթերման կամպանիայի բացառիկ նշանակության վրա, որով ավարտվում է 1931 թվի բոլշևիկյան բամբակի բերքի համար մղվող լարված պայքարը։

Բաղմակողմանի նախապատրաստություն տանելով, ակտիվ կերպով մոբիլիզացիայի յենթարկելով բամբակաբույծ կոլխոզների ու չքավորա-միջակային մասսաներին՝ բամբակաքաղի կամպանիայի շուրջը, բամբակաքաղի կամպանիան հետագայում կապակցելով կոլխոզային շարժման աճման և ամրապնդման հետ՝ համաձայն ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի հունիսյան պլենումի, կոլակության վրա վճռական հարձակում գործելը—հիմնական գրավականն են հանդիսանում առաջիկա կամպանիայի հաջողության։

Բամբակաքաղի համար տարվող բոլոր միջոցառումները պետք է նըպաստեն կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդմանը և դրա հիման վրա կոլխոզային շարժման հետագա աճմանը և հիմնական բամ-

բակային ռայոններում համատարած կոլլեկտիվացում ավարտելուն՝ ու դրա հիման վրա կուլակության լիկվիդացիան՝ որպես դասակարգի—ոչ ուշ 1932 թվից։ (Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողկոմխորհի սեպտեմբերի 1-ի վորոշումից։

14.—Կուսակցական, խորհրդային և կոլխոզա-կոոպերատիվային կազմակերպությունները առաջիկա բամբակաքաղի ու մթերման կամպանիային պետք է անմիջապես լայն մասսայական բացատրական աշխատանք ծավալեն բատրակա-չքավորական ու մենատնտես-միջակների մեջ՝ նրանց կոլխոզ դրավելու համար, բամբակաքաղի կամպանիայի կատարումն ու գերակատարումն բոլշևիկորեն կապակցեն գոյություն ունեցող կոլխոզների հետագա ամրապնդման խնդրի՝ կոլխոզային շարժման նոր հզոր վերելքի կազմակերպման հետ, այն հաշվով, որպեսզի հիմնականում կոլլեկտիվացումը ավարտվի 1932 թ։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի ոգոստոսի 2-ի վորոշումը)։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի ու Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

15.—Ռայոնական կազմակերպությունները պարտավոր են բամբակաքաղի աշխատանքները լիովին կապակցել կոլխոզների տնտեսական ամրապնդման հետ։

Բերքահավաքի կամպանիան, որը սերտ կապված է կոլխոզների տընտեսական ամրապնդման հետ, ներկայումս կոլխոզային շարժման ամրապնդման ու բամբակային ռայոնների 1932 թ. համատարած կոլլեկտիվացման պայքարի ոդակն են հանդիսանում։

Իսկական, և վոչ թե ձևական գործարքայնության մտցնելը, արդյունքների ու պարենեղենի, արդյունաբերական ապրանքների համաձայն աշխատորների բաշխելու խիստ դասավորումը, անդիմության միանգամայն վերացումը և բրիգադներին բաղի որոշ հողամասին ամրապնդումը, ամբողջ աշխատանքները ընկ. Ստալինի դիրեկտիվների հիման վրա կազմակերպումը—դրա մեջ է հաջողության գրավականը։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

16.—Բամբակի համար մղվող պայքարում կոլխոզնիկներն առաջին շարքերումն են գնում։ Այն ժամանակ, երբ մինչև թվով Ադրբեջանում բամբակաքաղի տարեկան պլանը իրացրած է 8,5%, կոլխոզնիկները (20 ռայոններում) սեպտեմբերին իրենց տարեկան պլանը կատարել են 11,6%։ Ցավ այդ այնպիսի պայմաններում, երբ կոլխոզներում դեռ շատ թույլ է արմատավորած գործարքայնությունը, երբ դեռևս կոլխոզնիկների ընտանիքների աշխատունակ անդամների խոշոր մասն աշխատանքի չե դուրս գալիս, երբ պարզվել են բամբակաքաղի համար վորոշած նորմաների չափազանց ցածր լինելը։

Ալի-Բայրամովի, Սալյանի և մյուս ռայոնների առաջավոր կոլխոզնիկներն արդեն ոյալ կերպով իրականացնում են բարձրացրած նորմաները—42—46 կիլոգրամ։ Պայքարն այդ նորմայի համար, պրոգրեսիվ գործարքայնությունն արմատավորելու համար, բոլոր կոլխոզներում աշխատանքի հաշվեառ մտցնելու, աշխատունակ կոլխոզնիկների ու նրանց ընտանիքի անդամների 100-տոկոսով աշխատանքի դուրս գալու համար—պետք է ապահովեն կոլխոզների պլանների կատարումն ու գերակատարումն՝ առավելագույն կրճատված ժամանակամիջոցում։

Առանձնապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Բարդայի, Աղջաբեդու և մյուս ռայոնների կոլխոզային սեկտորի հետ մնալուն՝ այդ ռայոն-

ների պլանների իրացման տեմպերի վերաբերմամբ։ Նման պայմաններում կոլխոզային սեկտորի հետ մնալը պետք է անմիջապես վերացնել։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

17.—Կոլխոզների մասին.—Բամբակի պլանը կատարելում կոլխոզնիկները իրենց հիմնական մասսայով առաջին շարքերումն են գնում։ Այսպես, օրինակ, յեթե Ադրբեջանի 26 ռայոններում մենատնտեսները կատարել են տարեկան պլանի 24,6%, այդ ժամանակամիջոցում կոլխոզնիկները գնման կետերին են հանձնել 32%։

Հենց այստեղ և յեթ պետք է մատնանշել, որ կոլխոզնիկները վոչ բոլոր ռայոններումն են առաջին շարքերում գնում։ Մի շարք ռայոններում, ընդհակառակը, մենատնտեսները կոլխոզնիկներից առաջ են անցել։

Օրինակ, Գյանջայի ռայոնում կոլխոզնիկները կատարել են 38,4%, իսկ մենատնտեսները 47,2%, Սալյանի ռայոնում 34,4%—42,5%, Ջիրբայելի—26,3%—28,2%, Աղդաշի—21,6%—27,8%, Ախսուի—18,8%—31,0%, Կարասուի—18,8%—26,8%, Կուտկաշենի—4,2%—16,0%։

Բացի դրանից կոլխոզնիկները հետ են մնում Կարյագինի, Թարթառի, Աղդամի, Թաուզի, Բելասուվարի, Կարադոնլվի ռայոններում և առանձնապես Նախիջևանի հանրապետությունում։

Դա շատ լուրջ ազդանշան է, որը բնութագրում է կոլխոզներում պրոգրեսիվ գործարքայնության արմատավորելու անբավարար լինելը։

Դա նմանապես վկայում է, որ կոլխոզային ամբողջ աշխատունակ զյուղացիությունը շատ թույլ է գրավված բամբակաքաղին։

Դրանից պետք է անհրաժեշտ յեզրակացություններ անել.—պայքար՝ բոլոր կոլխոզնիկներին պրոգրեսիվ գործարքայնության փոխանցելու համար, բոլոր աշխատունակ կոլխոզնիկների բամբակաքաղի ու տեղափոխմանը 100 տոկոսով դուրս գալու, սոցմրցումն ու հարվածայնությունը լայն կերպով զարգացնելու, լավագույն հարվածայիններին մրցանակ տալու համար—կվճռի կոլխոզներում պլանի իրացման հաջողությունը։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

18.—Կոլխոզնիկները բամբակաքաղի հենց սկզբից ամբողջ ժամանակ առաջին շարքերում են գնում բամբակի պլանի իրացման գործում։

Կասում-Իզմայիլի, Կարյագինի, Սալյանի և ուրիշ ռայոնների մի շարք կոլխոզներ դեռ հոկտեմբերի կեսերին վերջացրին հոկտեմբերյան պլանի կատարումն, իսկ մի քանի կոլխոզներ արդեն կատարել են բամբակաքաղի ու գնման կետերին հանձնելու իրենց տարեկան պլանը։

Սակայն, այդ բանը չի կարելի ասել բոլոր կոլխոզների մասին։

Իսկ հիմնականում կոլխոզները բավականին հետ են մնում հոկտեմբերյան վճռական պլանի կատարելու անհրաժեշտ տեմպերի համար պայքարելուց։

Միջին թվով, կոլխոզները հոկտեմբերի հնգորյակի վերջում գնման կետերին են հանձնել տարեկան պլանի 30-40%-ը՝ 50-70%-ի փոխարեն։

Ինչի մեջ են այդպես սուր կերպով հետ մնալու պատճառները։

Հիմնական պատճառները թաղնվում են նրանում, որ Ադրբեջանի բամբակային ռայոնների կոլխոզներն իրենց մեծ մասով դեռևս չեն կազմակերպել իսկական տնտեսական միավորներ դառնալ, որ կարողանային հենվել առաջավոր կոլխոզնիկների ու հարվածայինների արտադրական ակտիվության լայն զարգացման վրա։ Հարվածային-կոլխոզնիկը դեռ ևս կոլխոզում առաջատար դեմք չի հանդիսանում։

Հաճախ, մասսայական-արտադրական աշխատանքների փոխարեն, կազմակերպչական-արտադրական խորհրդակցությունների, բատրակա-չքավորական խմբակների ժողովների, բամբակ քաղող և բեռները տեղափոխող բրիգադների խորհրդակցությունների, պրոգրեսիվ գործարքայնության մասին բացատրական աշխատանքներ տանելու և արմատավորելու, կոլխոզների, կոլխոզների ներսում բրիգադների, բրիգադների մեջ հարվածայինների միջև սոցմրցում ու հարվածայնության ծավալելու փոխարեն—վորոշ դեպքերում, մենք նկատում ենք կոլխոզների ղեկավարների կողմից ոպորտունիստական անգործունեություն, ինքնահոսի վրա հուսադրում, ուրիշ դեպքերում, վարչարարության ձայն և ամբողջ աշխատանքները միայն կոլխոզի նախագահի կամ քարտուղարի հրամանների վրա հենվելու սկզբունք։ (Դա տեղի է ունենում բրիգադների կազմակերպման և նրանց բամբակաքաղի հողամասերն ուղարկելու դեպքում և այլն)։

Ռայկոլխոզմիությունները նույնպես անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում կոլխոզների մասսայական արտադրական աշխատանքների կազմակերպման հարցերին։

Այդ ամենը ամենաբացասական կերպով ազդում է կոլխոզների տընտեսական ամրապնդման վրա, սպանում է առաջավոր կոլխոզնիկների նախաձեռնությունը, ազդում է կոլխոզների արտադրական գործունեության վրա, նպաստում է դեմոբիլիզացիոն տրամադրությունների ուժեղանալուն, իջեցնում է բամբակի բերքի հավաքման համար տարվող պայքարի տեմպերը և հենց դրանով իսկ ջուր է ածում կուլակի ջրաղացին։

Վճռականապես վերջ տալ կոլխոզներում մասսայական արտադրական աշխատանքների ոպորտունիստական թերագնահատմանը, կոլխոզները դարձնել, իսկական արտադրական միավորներ, որոնք իրենց աշխատանքների մեջ հենվեին լավագույն հարվածային-կոլխոզնիկների վրա, որոնք վոչ թե խոսքով, այլ գործով՝ պայքարում են արտադրանքի նորմաների բարձրացման, պրոգրեսիվ գործարքայնությունը արմատավորելու, բոլոր աշխատունակ կոլխոզնիկներին գլխովին բամբակի քաղի և տեղափոխման գործին գրավելու համար—դրա մեջ է ներկայումս կոլխոզների կարևորագույն խնդիրը բամբակային պլանի համար մղվող պայքարում։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

4. ԸՆԹԱՑՔԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ, ՊՐՈԳՐԵՍԻՎ ԳՈՐԾԱՐՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ—ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

19.—Բերքահավաքի կամպանիայի հաջող անցկացնելու կարևոր պայմաններից մեկն է հանդիսանում սովխոզների, կոլխոզների և մենատնտեսությունների ամբողջ բանվորական ուժի լիովին ոգտագործումը, աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու, արտադրանքի ճիշտ նորմաների վորոշելու հիման վրա և բամբակային բոլոր ռայոններում, բոլոր աշխատանքների մեջ գործարքայնություն մտցնելու, իսկական վատնած աշխատանքի վորակն ու քանակը հաշվեառելու, աշխատանքի սոցիալիստական ձևերի լայն գործադրելու (սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուկսիր) հիման վրա։

Անդրհողժողկոմատն ու Անդրկոլխոզկենտրոնը հանրապետական կազմակերպությունների հետ միասին բերքահավաքի կամպանիայի սկզբին

պետք է ապահովեն կոլխոզներում բերքահավաքի աշխատանքների բոլոր տեսակների համար գործարքայնության արմատավորումը։

Անդրհողժողկոմատն, Անդրկոլխոզկենտրոնն ու Անդրտրակտորկենտրոնը ոգոստոսի 20-ից վաղ ուշ պետք է բոլոր տեսակի բերքի հավաքելու ամեն ձևի աշխատանքների արտադրանքի նորմաները սահմանեն, պայքարելով նվազագույն նորմաների դեմ, որոնք փաստորեն կազմալուծում են կոլխոզնիկների լայն մասսաներին։ Սահմանել բամբակաքաղի բոլոր տեսակ աշխատանքների համար՝ ամող գնահատություն՝ աշխատանքի օրերով։ Կոլխոզների վարչություններն պետք է բամբակի ամեն մի հողամասն և ինվենտարը ամրացնեն առանձին բրիգադային՝ բամբակաքաղի ամբողջ ժամանակամիջոցին։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

20.—Սովխոզների բոլոր կազմակերպություններն ու դիրեկտորները բերքահավաքի սկզբին գյուղատնտեսական բոլոր տեսակի աշխատանքները պետք է փոխանցեն խիստ գործարքայնի, սահմանելով արտադրանքի վորոշ նորմաներ, և աշխատանքի գնահատության նորմաները պետք է հասցնեն ամեն մի խուտորի, հողամասի և բանվորի, աշխատելով հասնել աշխատանքի արտադրականության առավելագույն բարձրացմանը։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

21.—Առաջարկել Կոլխոզկենտրոնին, վորպեսզի 2 որվա ժամանակամիջոցում դիրեկտիվներ մշակե ու տեղերն ուղարկի՝ կոլխոզներում բերքահավաքի աշխատանքները տանելու կարգի մասին (աշխատանքային ծրագիր, բրիգադների կազմակերպում, արտադրանքի նորմաներ և այլն), վերջինների մեջ նախատեսելով աշխատանքների տարբեր գնահատությունը՝ յելնելով աշխատանքի վորակի և իր ժամանակին կատարելուց։

Առաջարկել Հողժողկոմատին, Կոլխոզկենտրոնին և բամբակային ռայոնների բոլոր ռայդործկոմներին հանրապետության բոլոր կոլխոզներում քաղի ժամանակ ապահովել գործարքայնությունն ու աշխատորերի կանոնավոր հաշվեառը։ (Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի սեպտեմբերի 1-ի վորոշումից)։

22.—Բամբակաքաղի և մթերման հիմնական բաժինը ընկնում է համայնացրած սեկտորի վրա։ Սովխոզներն ու կոլխոզները պետությանն պետք է հանձնեն 117,500 տոննն հնդավոր բամբակ,—դա, օրինակ, կազմում է ամբողջ պլանի մոտ 70%-ը։

Դրա համար էլ—կոլխոզներում աշխատանքի կազմակերպման, գործարքայնությունն մտցնելու, անդիմության դեմ պայքարելու, կոլխոզային ամբողջ աշխատունակ գյուղացիության ամեն կերպ ոգտագործելու հարցերին մեծագույն ուշադրություն դարձնելը—դրա մեջ է կայանում կոլխոզների կենտրոնական հարցը։ («Բակ. Բաբոչի» առաջնորդողից)։

23.—Բամբակաքաղի և մթերման առաջին արդյունքները դրա հետ միասին բաց են անում մի շարք ճեղքվածքներ ու թերություններ աշխատանքում։ Ռայոնների մեծ մասը բամբակաքաղի աշխատանքներն անբավարար է ծավալել։ Կան նույնպես ռայոններ, ինչպես օրինակ, Աղդաշի, Թաուզի, Թարթառի, Սամուխի, Ղազախի, Նախիջևանի հանրապետությունը և մի ամբողջ շարք ուրիշները, վորոնք դեռ ևս բոլշևիկյան տեմպեր չեն ծավալել՝ բամբակի բերքը հավաքելու պայքարի համար։ Այդ ռայոնների թվումն

(3458-53) 336956-62

կան և այնպիսիները, վորոնք գարնանացանի ժամանակ պայքարում էին առաջին շարքերում, իսկ հիմա տեմպերից հետ են մնում, հանձնում են բոլշևիկյան այն դիրքերը, վոր նրանք ձեռք էին բերել բամբակի համար մղվող պայքարի առաջին շրջանում։

Ներկայումս ինչի՞ մեջ են կայանում հետ մնալու պատճառները։

Հետ մնալու հիմնական պատճառները նրա մեջ են, վոր կոլխոզները մինչև օրս, դեռ ևս բամբակաքաղի համար հաստատ մշակված արտադրական պլաններ չունին, վորը հասցրած լինի մինչև բրիգադին և ամեն մի կոլխոզնիկին առանձնապես։

Կոլխոզնիկների ակտիվությունը դեռևս անբավարար է մոբիլիզացիայի յենթարկված՝ հաստատ մշակված արտադրական պլանների հիման վրա բերքը իր ժամանակին հավաքելու անհրաժեշտության շուրջը, հետևյալ տարվա լայնացրած պլանի աշնանային աշխատանքների նախապատրաստման խնդիրների շուրջը։

Կոլխոզների մեծ մասում գործարքայնությունը փաստորեն չի գործադրվում, աշխատորերի գրելը կամ ամենևին չի կատարվում, կամ կատարվում է միայն ձևականորեն։

Մինչև հիմա դեռևս աշխատանք չի ծավալված կոլխոզների ամբողջ աշխատավոր ու աշխատունակ ազգաբնակության ու քարշաուժի մոբիլիզացիայի համար՝ բամբակաքաղի ու բամբակը գնման կետերն ու բամբակային գործարանները տեղափոխելու համար։

Մեքենա-տրակտորային կայանները՝ վորպես կոլխոզային գյուղացիության ու մենատնտեսների կազմակերպիչներ՝—շատ թույլ են կատարում իրենց դերը բամբակն իր ժամանակին հավաքելու և գնման կետերին հանձնելու պայքարում։

Տեղերում անթույլատրելի թույլ են ոգտագործվում Հյուսիսային Կովկասից յեկած սոցիալիստական բուկսիրի բրիգադները, վորոնք շրջանը համատարած կոլեկտիվացման փոխանցելու պայքարի իրենց հետ հարուստ փորձառություն են բերել։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

25.—Պլանը կատարելու գործում վճռականը հանդիսանում է մասսայական աշխատանքը գյուղում, սովխոզում, մեքենա-տրակտորային կայանում, կոլխոզում, գնման կետում և բամբակային գործարանում։ Այդ հարցի մասին յեղած ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումները նույնպես չեն կատարված, իսկ այն ինչ, մասսայական աշխատանքը պետք է բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում լինի կանգնած, վորոնք պարտավոր են սոցմրցում ծավալել կոլխոզներում, սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում և բամբակային գործարաններում։ Աշխատեն, վորպեսզի բոլորն աշխատանքի դուրս գան, իրացնեն բարձրացրած նորմաները, հաշվեառը կանոնավոր դասավորեն, դրա համար ընտրելով լավագույն աշխատավորների, և լայն կերպով ժողովրդականացնել լավագույն հարվածայինների նվաճումները, միևնույն ժամանակ պատի թերթերի և սև տախտակների մեջ պիտի խիստ քննադատության յենթարկել հետ մնացողներին։ Պատի թերթերն ու տախտակները, պլակատների ու լոզունգների հետ միասին պետք է կախված լինեն գյուղում, գործարանում, սովխոզում, կոլխոզում, մեքենա-տրակտորային կայանում, գնման

կետում և ռայոնական կազմակերպություններում։ Կենտրոնական կազմակերպությունները պետք է անմիջապես լավ հարվածային-կոլխոզնիկների ու բանվորների, նույնպես և առաջավոր կոլխոզներին, սովխոզներին ու ռայոններին պրեմիաներ տալու գործը կազմակերպեն, այդ հարմարեցնելով Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադի ղեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

25. —Սկսվել է բամբակի առաջին մասսայական քաղը։ Կարմիր սայլաշարքերն արդեն սկսել են շարժվել նոր բերքի հնդավոր բամբակը բարձած։ Այս տարի բամբակային դաշտերում աշխատում են հարյուրավոր բամբակ քաղող մեքենաներ։ Բայց հաղթանակը վորոշում են մարդիկ։ Բամբակաքաղի դաշտային աշխատանքների կազմակերպելու ստուգանից կախում ունի այդ ամբողջ կամպանիայի հաջող ելքը։ Պետք է ասել, վոր բոլշևիկորեն անցկացրած գարնանացանից մինչև բամբակաքաղի սկիզբն յեղած ժամանակը շատ թույլ եր ոգտագործված կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար։ Այդ արդեն իրեն զգացնել է տալիս քաղի ժամանակ։ Գործարքայնության, արտադրանքի նորմաների, հաշվեառի հարցերը—ահա կոլխոզների թույլ տեղերը։ Դրա հետ միասին պետք է մատնանշել տեղերում կուսակազմակերպությունների մասսայական թույլ աշխատանքը։ Մի շարք կոլխոզներում, յեթե չասենք մեծամասնությունում, դաշտերում բամբակ են քաղում միայն կանայք ու անչափահասները։ Դեռևս չի վոչնչացրած բամբակաքաղի մեջ տղամարդու աշխատանքի դուրս գալու պախարակելի «ավանդական սովորությունը». այդ ուղղությամբ անհրաժեշտ և մասսայական ամենաինտենսիվ աշխատանք տանել՝ ուղղված աշխատունակ կոլխոզնիկների գլխովին դաշտ դուրս գալու կողմը։

Առաջավոր կոլխոզնիկները բամբակի քաղելու գործում արտադրանքի բարձր նորմաներ են տալիս։ Սակայն, բարձր նորմաների համար տարվող պայքարը դեռևս չի ընդգրկել բոլոր կոլխոզները։ Ռայոնական մամուլը բոլոր կոլխոզներին պետք է ցույց տա առաջավորների նվաճումները, պետք է արշավ և սոցմրցում կազմակերպի՝ բամբակային դաշտերում արտադրանքի բարձր նորմաների համար։

Մի շարք ռայոններ ժամանակից շուտ կատարեցին բամբակի մթերման սեպտեմբերյան պլանը։ Դա այն է ասում, վոր բամբակի մթերումն ձգձգելու վոչ մի օբյեկտիվ պատճառ չկա։ Բայց կան ռայոններ, վորտեղ բամբակն արդեն սկսել է նստել, սկսվել է նրա կուստարային մշակումը։ Անպայման դա դասակարգային թշնամու ձեռքի գործն է, վորը մի քանի տեղերում ներս է սողոսկել կոլխոզները։ Բացի դրանից կուլակները չեն կատարում հաստատ առաջադրությունները։ Յեղբակացությունը պարզ է. կուսակցական ղեկավարությունը պետք է կենտրոնացնել դաշտերում, բրիգադներում, ղեկավարել կոնկրետ կերպով և ապահովել հավաքված բամբակն անմիջապես գնման կետերն ու գործարաններն ուղարկելու գործը։ («Պրավդա» հոկտեմբերի 10-ից)։

ԿԵՆՏԿՈՄ ԸՆԹԱՑՏՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

26 —ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմն ու Անդրժողկոմխորհը մատնանշում են, վոր մի շարք ռայկազմակերպություններ մինչև այժմ թերագնահատում են կոլտնտեսուհիների ու մենատնտեսուհիների աշխատանքի կազմակերպելու և մեծագույն չափով ոգտագործելու հարցի քաղաքական խոշոր նշանակությունը։

Ռայոնական, կուսակցական, խորհրդային և կոլխոզային կազմակերպությունների լայն մասսայական աշխատանքները, կոլխոզներում և գյուղատնտեսական բոլոր տեսակի աշխատանքներում կանանց աշխատանքը գործադրելու վճռական միջոցառումներ անցկացնելու գործում, սոցիալական-կենցաղային հիմնարկների (մանկամսուրներ, հրապարակներ, հասարակական ճաշարաններ, հասարակական սնունդ դաշտային աշխատանքների ժամանակ և այլն) լայն ծավալումը, բամբակաքաղի կամպանիայի հաջող իրագործման հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում։

Առաջարկել կուսակցության կենտկոմներին և ռայկոմներին, Անդրկոլխոզկենտրոնին և հանրապետությունների կոլխոզկենտրոններին, անմիջապես աշխատանք ծավալել բամբակային ռայոններում մանկական հիմնարկներ կազմակերպելու համար, այն հաշվով, վորպեսզի նրանք հիմնականում ընդգրկեն բոլոր կոլխոզները։

5. ՄԵՆԱՏՆՏԵՍԻ „ՁԱԽ" ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՄ

27.—Կուսակցության ռայոնական կոմիտեներն ու գյուղական կազմակերպությունները պետք է ապահովեն մենատնտեսների, բատրակա-չքավորական և միջակային տնտեսությունների մեջ լայն մասսայական հասարակական-քաղաքական աշխատանքները, վճռականապես պայքարելով բամբակաքաղի կամպանիայում անհատական սեկտորի թերագնահատման տրամադրության դեմ։ Ամբողջ քաղ-մասսայական աշխատանքների բովանդակությունն ու մեթոդները յենթարկելով բամբակաքաղի կամպանիայի արտադրական խնդիրներին, գոյություն ունեցող կոլխոզների ամրապնդմանը և կոլեկտիվացման տեմպերի հետագա վերելքին, գյուղական կազմակերպություններն անխնա պայքար պիտի մղեն դեմոբիլիզացիոն տրամադրությունների ամեն տեսակ ձևի արտահայտությունների դեմ, վորոնք բամբակաքաղի ու մթերման կամպանիայի մեջ աջ ոպորտունիստական թերագնահատության հետևանք են հանդիսանում։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի ու Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

28.—Մատնանշելով բերքահավաքի կամպանիայի ժամանակ կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումն ապահովելու և դրա հիման վրա կոլխոզային շարժման հետագա աճման կարևորությունը, Կենտկոմն ու Ժողկոմխորհը վճռականապես նախազգուշացնում են անհատական սեկտորի արհամարհելու և մոռացության տալու դեմ և առաջարկում են վճռական պայքար մղել բամբակաքաղի կամպանիայում մենատնտես սեկտորի թերագնահատելու և կոլխոզ մտնելու համար նրանց մեջ համառ կերպով աշխատանքներ ծավալել չցանկանալու դեմ։ (Աղրկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողկոմխորհի սեպտեմբերի 1-ի վորոշումից)։

29.—Միանգամայն անբավարար ուշադրություն է դարձնվում մենատնտես սեկտորին, վորի տեսակարար կշիռը դեռ ևս նշանավոր է։ Մենատնտեսները պարտավոր են պայմանագրությամբ պետությանը տալ 50,622 տոննն բամբակ, այսինքն ամբողջ պլանի մոտ 30%։

Վոչ մի բոլշե չմոռանալ մենատնտեսին, ամենայն աջակցություն ցույց տալ նրան կամպանիայի ընթացքում, կոլխոզնիկների անձնական օրինակով, կոլխոզային տնտեսության նվաճումները ցուցադրելով—բամբակի հասարակական քաղի ձգտում առաջացնել, և, դրա հիման վրա, չքավորա-միջակային տնտեսությունների կոլխոզ մտնելու նոր հոսանք առաջ բերել—դրա մեջ և կենտրոնական խնդիրը՝ մենատնտես սեկտորի վերաբերմամբ։ („Բակ. Բաբոչի" թերթի առաջնորդողից)։

30.—Մենատնտես սեկտորի մասին.—Մենատնտես սեկտորը բամբակային պլանի կատարման մեջ բավականին նշանակալից տեսակարար կշիռ ունի։ Ադրբեջանում հնգավոր բամբակ հանձնելու տարեկան պլանի մոտ 29%-ը պարտավոր են կատարել մենատնտեսները։ Սակայն, մենատնտես սեկտորը դեռ ևս սուր կերպով հետ է մնում տարեկան պլանի կատարումից։

Մենատնտեսները տարեկան պլանի միայն 23%-ն են կատարել։ Ճիշտ է, ինչպես մենք արդեն վերևում ասեցինք, մի շարք ռայոններում մենատնտեսները կոլխոզներից առաջ են գնում, բայց, մյուս կողմից, մի շարք ռայոններում մենատնտես սեկտորի սուր յետ մնալն ունենք։

Մենատնտես սեկտորի հետ մնալու մասին ունեցած տվյալները մեզ հարկադրում են ուշադրություն դարձնել բամբակային պլանի համար մղվող պայքարի այդ լուրջ հողամասին։ («Բակինսկի Բաբոչի» լրագրից)։

6. ՈՒԺԳԻՆ ՄԵՂՄԵԼ ԿՈՒԼԱԿԻՆ

31.—Կուլակային-ունևոր տնտեսությունների վերաբերմամբ առաջարկել ռայգործկոմներին, վոր նրանք հնգավոր բամբակը գնման կետերին հանձնելու հաստատ ժամկետներ ու չափեր սահմանեն՝ համաձայն այն պարտավորությունների, վորը նրանցից առնված է բամբակի պայմանագրումների կատարելու ժամանակ. հանցավորներին և հաստատ առաջադրություններ չկատարողներին առանց առարկության դատական պատասխանատվության յենթարկել։

Հանրապետության դատախազությունը այդ գործերի հերթից դուրս քննելը պիտի ապահովի։

Առաջարկել մեքենա-տրակտորային կայաններին, ռայկոմների և ռայգործկոմների հետ միասին առանձին հսկողություն նշանակեն՝ կուլակային-ունևոր տնտեսություններին տրված հաստատ առաջադրությունների կատարելու վրա։ (Ադրկոմկոսի (բ) Կենտկոմի սեպտեմբերի 1-ի վորոշումից)։

32.—Բամբակի համար մղվող պայքարի ամբողջ ժամանակամիջոցում մենք յերբեմն ստիպված ենք յեղել ընդհարվել դասակարգային թշնամու—կուլակի սուր դիմադրությանը, վորը փորձ եր անում խանգարել բամբակի պլանի համար մղվող բոլշևիկյան պայքարը։

Վճռական ետապում—բամբակաքակի և մթերման ժամանակ—դասակարգային թշնամու դիմադրությունն ել ավելի կուժեղանա։ Կուլակությունը, վորը դատապարտված է վերանալու, շնորհիվ հիմնական բամբակային ռայոնների համատարած կոլլեկտիվացման անցնելուն, փորձեր կանի բամբակի համար մղվող պայքարի վերջին ետապում մեր միջոցառումները խանգարել։ Դրա համար ել,—կուլակության դեմ պայքարում մեծագույն կազմակերպվածություն, ամբողջ ճակատի վրա վճռական հարձակում, մերկացում և կուլակության վորևե նենգության անմիջական լիկվիդացիան պետք

և բամբակի համար մղվող պայքարի, կոլխոզային շարժման ամրապնդման և զարգացման պայքարի անմիջական մասը կազմեն։ («Բակ. Բաբոչի» առաջնորդողից)։

33.—Ցերերդ յեզրակացությունը.—Տեղեկությունների մեջ հրատարակվող նյութերը խոսում են այն մասին, վոր կուլակը մի շարք ռայոններում «կորել է» ռայոնական կազմակերպությունների տեսողության կենտրոնից։ 28 ռայոններից միայն 8-ն են հաղորդում այն մասին, թե նրանց ռայոններում կուլակներն իրենց պայմանագրությամբ վորքան բամբակ են հանձնել։ Այդ ռայոններում կուլակներն ընդամենը հանձնել են միայն տարեկան պլանի 4%-ը, իսկ կուլակային—ունևոր տնտեսությունների բամբակ հանձնելու պլանի վերաբերմամբ՝ դա կազմում է ընդամենը միայն 1,2%։

Գյուղի կուլակային-ունևոր վերնախավը սաբոտաժի և յենթարկում հաստատ առաջադրությունների կատարումը։ Անհրաժեշտ է դրանից յեզրակացություն անել—ուժգին սեղմել կուլակին, ստիպել նրան, վոր նա բամբակը հանձնի, «շատ կարճ ժամանակամիջոցում, խիստ պատասխանատվության յենթարկելով իրեն պարտավորությունը խախտողին»։ (Ադրկոմկոսի (բ) Կենտկոմի վորոշումից)։

Այդ հարցում ամենափոքը դանդաղումն նպաստում է կուլակի ուժեղացմանը, նրա կազմալուծող դերի ուժեղացմանը՝ բամբակի պլանի համար մղվող պայքարում։

Միայն հուսահատ ոպորտունիստը, վորը կուլակության ագենտուրա է հանդիսանում, կարող է ձեռքերը ծալած նստել ու չնկատել կուլակին այն ժամանակ, թե ինչպես նա կատաղի դիմադրություն է ցույց տալիս և բամբակի պլանի խանգարելու փորձեր է անում։

Դրա հետ միասին պետք է վճռական պայքար մղել նրանց դեմ, ով որ «ձախլիկ» կերպով, սոսկ վարչարարության հիման վրա, թվերի հետևից ընկնելով, մոռանում է մասսաների բոլշևիկորեն կազմակերպելու մասին։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

34.—Կուլակի մասին.—Բամբակային պլանի իրացման մեջ կուլակային-ունևոր տնտեսությունների տեսակարար կշիռը աննշան է։ Կուլակային—ունևոր տնտեսությունները Ադրբեջանում բամբակի հավաքելու և հանձնելու ամբողջ տարվա պլանի ընդամենը 3,5%-ը պետք է կատարեն։ Սակայն, այդ աննշան տեսակարար կշռի հետևում չի տեսնում կուլակային-ունևոր տնտեսությունների իր ժամանակին հաստատ առաջադրությունները կատարելու քաղաքական խոշոր նշանակությունը, ով չի նկատում կամ «տեսողությունից կորցնում է» կուլակին, նա գլորվում է ոպորտունիստական ճահճի մեջ, ընկնում է դասակարգային թշնամու ագենտների բանակը։

Կոլեկտիվացման հաջողությունների և բամբակային ռայոններում 1932 թվին համատարած կոլեկտիվացման անցնելն ավարտելու պայմաններում—կուլակը կատաղի դիմադրություն է ցույց տալիս, փորձում է խանգարել բամբակային պլանի իրացումը, սաբոտաժի և յենթարկում հաստատ առաջադրությունների կատարումը։

Զբմբռնել ու չնկատել այդ—դա նշանակում է իր քաղաքական կարճատեսության տակը ստորագրել։

Նման պայմաններում, ինչպես կարելի է դնահատել նման դրությունը, յերբ կուլակային-ունևոր տնտեսությունները Ադրբեջանում կատարել են

տարեկան պլանի միայն 18,1%-ը (20 ռայոններում, վորոնք տեղեկություններ են հաղորդել)։

Ինչպես կարելի է գնահատել նման դրությունը, յերբ մի շարք ռայոններ (Կասում-Իզմայիլի, Շամխորի, Քյուրդամիրի, Սամուխի, Բելյասուվարի, Աղջաբեթիի, Զանգիլանի և Նախիջևանի հանրապետությունը)—կուլակային ունևոր տնտեսությունների հանձնած բամբակի ամենորյա հաշվեառ չեն պահում։

Ռայոնական և կենտրոնական (մասնավորապես Հողժողկոմատը և դատախազությունը) կազմակերպությունները պետք է անհրաժեշտ յեզրակացություններն անեն նրա համար, վորպեսզի անմիջապես կատարեն կուլակի վերաբերմամբ Ազրկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 1-ի և 21-ի դիրեկտիվները։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

35.—Բամբակաքաղի կամպանիան պետք է տարվի դասակարգային պարզ քաղաքականության հիման վրա, յելնելով ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրամի և Ազրկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումներից։ Սակայն, ռայոնների մեծ մասը և մի շարք կենտրոնական կազմակերպություններ մինչև այժմ մասսաներին մոբիլիզացիայի չեն յենթարկում կուլակի դեմ պայքարելու համար, կուլակներին՝ չարամտորեն բամբակ չհանձնելու համար պատասխանատվության չեն յենթարկում։ Պետք է անմիջապես վերջ տալ այդ խայտառակ յերևույթին, ուժգին զարկել կուլակին, ստիպել նրան բամբակը հանձնելու։ Այն կազմակերպությունների աշխատանքը, վորոնք վճռական պայքար չեն մղի կուլակի դեմ և առաջվա պես կսկսեն սվաղել դասակարգային պայքարի նշանակությունը բամբակաքաղի կամպանիայի պրոցեսում, պետք է գնահատել, վորպես աջ ոպորտունիզմի արտահայտություն գործնականում և կուլակի հետ կռվել չցանկանալ։ Առանձնապես այդ հարցում պետք՝է պարզ աշխատի մամուլը։ Կուլակի թերագնահատման դեմ «Բակինսկի Բաբոչի» թերթի սկսած պայքարը պետք է տեղափոխել և մյուս թերթերը։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադայի զեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

7. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԳՆՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՈՒ ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

36.—Հաշվի առնելով հնդավոր բամբակի գտելու աշխատանքների մեծացող ծավալը, դրա հետ միասին բամբակաքաղիչ գործարանների աճող բեռնվածությունը՝ նրանց ներկայացվող մշակման վորակի բարձրացման պատճառով, առաջարկել Անդրբամբակմիացության, վորպեսզի ապահովի ռայոնացիոն կամպանիայի սկզբին բամբակաքաղիչ գործարանների մարտական պատրաստությունը, այդ ժամկետին ավարտի բոլոր բամբակաքաղիչ գործարանների նորոգման և շինարարական-վերակառուցողական աշխատանքները։

Բամբակաքաղիչ գործարանների կողմից արտադրական ծրագրերների հաջող կատարման նպատակով, առաջարկել կուսակազմակերպություններին գործարանների վրա ուժեղացնել ուշադրությունն ու կուսակցական զեկավարությունը։ Պարտավորեցնել Անդրբամբակմիացության, վորնա իր ժամանակին բոլոր գործարանների համար բանուժ հավաքի, առանձնապես նրա վորակյալ մասը։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրամի և Անդրժողկոմխորհի դեկտեմբերի 12-ի վորոշումից)։

37.—Բամբակային գործարաններն պարտավոր են իրենց աշխատանքներն այնպիսի հաշվով կազմակերպել, վորպեսզի ամբողջ բամբակի պահելը ու մշակելն ապահովեն։ Դրա համար անհրաժեշտ է, աշխատել՝ վորպեսզի գործարաններն անընդհատ գործեն, սարքավորումների առավելագույն բեռնվածությամբ բարձրացնել աշխատանքի արտադրականությունը, ծավալել մասսայական աշխատանքը, սոցմրցումն ու հարվածայնությունը, ուժեղացնել մատակարարումն, վերացնել անտնտեսությունը, զեկավարների վրա դնելով վոչ միայն իրավական, այլ և նյութական պատասխանատվություն՝ ունեցած անփույթ վերաբերմունքի համար դեպի բամբակը, դեպի հացը, վագոնները իր ժամանակին չդատարկելը և այլն։

Վորպես որինակ, թե ինչպես չպետք է զեկավարել գործարանը, կարող է ծառայել Ցեվլախի գործարանի դիրեկտորը, վորի աշխատանքը անցրոզ է ծառայել տեղական և կենտրոնական կազմակերպությունների կողմից։ Պետք է անմիջապես պատասխանատվության կանչվեն՝ դեպի աշխատանք ունեցած անփույթ վերաբերմունքի համար։ Մամուլը պետք է սիստեմատիկ կերպով բացի ու խարազանի գործարանների, գնման կետերի, սովխոզների և այլոց վատ աշխատանքը։

Այնքան ել լավ չե գնման կետերի և բամբակային գործարանների դրությունը՝ բամբակ ընդունելու և մշակելու պատրաստ լինելու վերաբերմամբ։ Գնման կետերի կառուցումներն ու առանձին գործարանների վերանորոգումները (Ցեվլախ) խանգարվել են վոչ միայն շինանյութերի և սարքերի (Ցեվլախ) խանգարվել, նախաձեռնության պակասության պատճառով, այլ գլխավորապես, նախաձեռնության, յեղած ռեսուրսների ոգտագործել չիմանալու, անթյան բացակայության, կոնկրետ զեկավարության և կուսականտեսավորության, անդիմության, կոնկրետ զեկավարության պատճառով։ Ստիպցական-մասսայական աշխատանքի բացակայության պատճառով։ Ստիպված ես զարմանալ, թե մինչև որս վոչոք պատասխանատվության չի յենթարկվել թարկվել այդ բոլոր խայտառակությունների պատճառով։

Այդ անպատասխանատվությունը պետք է անմիջապես վերացնվի և զեկավարությունը՝ տեղական ռեսուրսներ գտնելու Ազրկոմի (բ) Կենտկոմի և Անդրյերկրամի՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Անդրյերկրամի՝ տեղական ռեսուրսներ գտնելու և շինարարության ավարտելու մասին վորոշումն կարճ ժամանակվա ընթացքում պետք է իրագործվի։ Բամբակային ռայոնների կուսկազմակերպություններն ու Բանգյուղ-Տեսչության որգանները շինարարության ու վերանորոգման տան պահեստային տնտեսության շինարարության ավարտելուն, առանձին կառուցումների ամրապնդելով հատուկ ընկերների, ավարտելուն, առանձին կառուցումների համար։ (ՎԵԿԱՊԵ-ի վորոնք պատասխանատու են լինելու աշխատանքների համար։ (բ) Կենտկոմի բրիգադի զեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

8. ԲԱՄԲԱԿԻ ՏԵՂԱՓՈԽԱՌՈՒՄՆ—ԲԱՄԲԱԿԱՔԱՂԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՈՂԵԿՆ Է

38.—Մատնանշելով բամբակի ռայոններում, առանձնապես Սալյան-Մուղանի ռայոնում ու Ղարաբաղի ցանցրաղիր ռայոններում ճանապարհների ծայրահեղ անկարգությունը, և ինչպես մոտենալու, նույնպես և սովխոզների ներսում ներսովխոզային ճանապարհների համարյա թե միանգամայն բացակայությունը, վորը լուրջ վտանգ է սպառնում հնդավոր բամբակն իր ժամանակին գնման կետերին և բամբակային գործարաններին հանձնելու գործին, և նկատելով համապատասխան ուշադրության բացակայությունն՝ ինչպես Անդրբամբակմիացության կողմից, նույնպես և Զակգորտրանսի և Հանրապետության

Ժողկոմխորհի կողմից, նույնպես և ռայոնական կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից դեպի բամբակային ռայոնների ճանապարհների շինարարության հարցերը՝ Անդրյերկրկոմն ու Անդրժողկոմխորհն առաջարկում են.

ա) Զակդորտրանսն ու Հանրապետության Ժողկոմխորհը անմիջապես պետք է ձեռնարկեն բամբակային ռայոններում գտնվող հանրապետական նշանակություն ունեցող բոլոր խճուղիների ու կամուրջների վերանորոգմանն՝ այն հաշվով, որպեսզի դրանք ավարտվեն սեպտեմբերի 15 ից վոչ ուշ։

Անդրֆեդերացիայի կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհները համապատասխան վորոշում պիտի հրատարակեն, վորով պարտավորեցնեն ռայդործկոմներին, վ ր մշակման աշխատանքներն ավարտելուց հետո և մինչև բերքահավաքի կամպանիայի սկիզբը, աշխատանքի պարտիքի և յերկու տասորյակների կազմակերպման միջոցով, նորոգեն բոլոր հողի ճանապարհները, նույնպես և կամուրջներն ու նավամատույցներն՝ գնման կետերի և բամբակային գործարանների ռայոններում։

բ) Սովխոզբամբակը տաս որվա ժամանակամիջոցում պետք է պայմանագիր կնքի Զակդորտրանսի հետ՝ ներսովխոզային ճանապարհներ կառուցելու համար։ Կարա-Զալայի, Մի-ի, Աղիզբեկովի, Ալազանի և Սարդարաբադի սովխոզներում այդ աշխատանքներն ապահովել անհրաժեշտ միջոցներով՝ սովխոզների շինարարության համար պլանով նախատեսված դուռմարներից։

Պարտավորացնել Զակդորտրանսին ավարտել ներսովխոզային և ճյուղային ճանապարհները, նույնպես և Աղջաբեդու և Նաֆթա-Կուլի-Բեգլի (14 կիլոմետր) իրար կապող ճանապարհը՝ վոչ ուշ քան սեպտեմբերի 25-ը։ Վերջինիս կառուցումը կատարել Աղբեջանի ներսում ճանապարհների շինարարության համար յեղած վարկերի հաշվին։

գ) Անդրդերժողանխորհն ու Զակլեսբումտրեստը պետք է ապահովեն փայտեղեն նյութեր բաց թողնելը Զակդորտրանսի պահանջագրերի համաձայն՝ հերթից դուրս՝ վերոհիշյալ ճանապարհների և կամուրջների կառուցման և նորոգման համար։

Անդրբամբակտրեստն ու կոլխոզային սիստեմը պետք է փոխադրական միջոցներ կազմակերպեն հնդավոր բամբակը դաշտերից ընդունող կետերը հասցնելու համար և մասնակցեն բեռնատար տրանսպորտ կազմակերպելու գործին՝ ընդունող կետերից բամբակը դեպի գործարանները փոխադրելու համար։

Անդրբամբակմիացությունը անմիջապես պետք է ձեռնարկի բեռնատար տրանսպորտ կազմակերպելու գործին՝ բամբակային ռայոնների կոլխոզների ու մենատնտես գյուղացիական տնտեսությունների քարշաուժը պայմանագրվելու միջոցով, նույնպես և միջոցներ ձեռք առնի գործի քաշելու վոչ բամբակային ռայոնների ազատ քարշաուժը։ Սեպտեմբերի 15-ից վոչ ուշ բամբակային գործարաններին ու գնման կետերին կից կազմակերպել փոքրիկ նորոգչական արհեստանոցներ՝ տրանսպորտային միջոցների ընթացիկ նորոգումների համար։ Անդրմատակարժողկոմատը պետք է ապահովի այդ արհեստանոցներն անհրաժեշտ քանակությամբ յերկաթեղենով ու փայտանյութերով՝ Անդրբամբակմիացության պահանջագրերի համաձայն։

Զակդորտրանսը պետք է կազմակերպի ավտոշարքեր իր մոտ ունեցած, նույնպես և նոր ստացվող ավտո-մեքենաներից և առաջին հերթին ապահովի Յեվլախ-Աղջաբեդի ճանապարհի սպասարկումը։

Զակրեչտրանսը պետք է ապահովի Քուռ գետի վրա անհրաժեշտ քանակությամբ տոննաժ, բամբակը և ուրիշ բեռներն—վոր կապ ունեն բամբակամթերման կամպանիայի հետ—անընդհատ և իր ժամանակին տեղ հասցնելու համար։ Միաժամանակ ապահովել տեղերում Քուռ գետի վրա բամբակային բեռներ ընդունելու նավակայանների նորոգումն ու նոր նավամատույցների կառուցումն։

Անդրկովկասյան յերկաթուղու վարչությունը պետք է ապահովի անհրաժեշտ քանակությամբ վագոններ տրամադրելու գործը՝ բամբակային բեռներն իր ժամանակին տեղափոխելու համար։

Առաջարկել Անդրֆեդերացիայի կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին ոգոստոսի 15-ից վոչ ուշ համապատասխան վորոշում հրատարակել՝ կուլակային-ունևոր տնտեսությունների բեռնատար միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու՝ կարիքավոր կոլխոզային և մենատնտես տնտեսություններին տրանսպորտային ոգնություն ցույց տալու համար։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

39.—Առաջարկել բամբակային ռայոնների ռայդործկոմներին, վոր մինչև սեպտեմբերի 10-ը ապահովեն գյուղական ազգաբնակության բոլոր տրանսպորտային միջոցների վերանորոգման ավարտելը և մեքենա-տրակտորային միջոցների վերանորոգման ավարտելը և տրանսպորտային միջոցներ ստանալու համար։ Միաժամանակ նրանց ոգտագործելու համար։

Առաջարկել ռայգործկոմներին, վոր նրանք մոբիլիզացիայի յենթարկեն առաջին հերթին կուլակային-ունևոր տնտեսությունների ամբողջ տրանսպորտը՝ հնդավոր բամբակը գնման կետերն ու գործարաններն տեղափոխելու համար, և նրանց աշխատանքը վճարել Անդրբամբակոմի վորոշմամբ, իսկ անհրաժեշտ յեղած դեպքում կանգ չառնել ամշած գնահատումներով։

Առաջարկել Հողժողկոմատին՝ վոր գործի քաշի Անդրբամբակոմին և նրա հետ միասին բամբակի տեղափոխման ծավալուն պլան կազմի ու Պետպլանի մի միջոցով ներկայացնի Ժողկոմխորհին, այդ պլանի մեջ նախատեսելով Քուռ և Արաքս գետերի գետային տրանսպորտի մեծագույն չափով ոգտագործումը։ (Անդրկոմկուսի (բ) կենտկոմի և Ժողկոմխորհի սեպտեմբերի 1-ի վորոշումից)։

40.—Բամբակի տեղափոխումը, նոյեմբերի 1-ին տարեկան պլանի 70—80%-ը գնման կետերին հանձնելը, ծրագրով նախատեսված գտած բամբակը տեկստիլ գործարաններին հասցնելը բամբակի պլանի իրացման համար մղվող պայքարի վճռական ճյուղերից մեկն է և հանդիսանում։

Տրանսպորտային միջոցների կանոնավոր կազմակերպումը վճռում է հավաքված բամբակն իր ժամանակին գնման կետերին հանձնելու, գնման կետերից բամբակային գործարաններն տեղափոխելու, գտած բամբակը տեկստիլ գործարաններն ուղարկելու հարցերը։

Բոլշևիկորեն կազմակերպել տրանսպորտային կոնվեյերը՝ բամբակային դաշտերից մինչև տեկստիլ գործարանները՝ ահա թե ինչումն է բամբակային պլանի համար մղվող պայքարի հիմնական խնդիրներից մեկը։

Բամբակ տեղափոխելու համար գործի լծել ռայոնի բոլոր տրանսպորտային հնարավորությունները (քարշաուժը և կոլխոզնիկների ու մենատնտեսների փոխադրական միջոցները) պրոգրեսիվ գործարքայնության անցկացնելով բամբակի տեղափոխումների բոլոր սպասարկողներին—տեղափոխությունների տեմպերի ուժեղացման, բամբակաքաղի և բամբակը գնման կետերին հանձնելու մեջ առաջացած ճեղքվածքները վերացնելու, գնման կետերից դեպի գործարաններն տեղափոխելն ուժեղացնելու կարևոր պայմանն է։

Պրոգրեսիվ գործարքայնությունը, բամբակ տեղափոխող լավագույն սայլապաններին պրեմիա տալը պետք է խթան ծառայեն տեղափոխությունների ուժեղացման համար, իսկ դա իր հերթին վճռում է բամբակի տարայի շուտ հետ դարձնելու հարցը։

Բամբակի տեղափոխությունների մեջ «նեղ» տեղերից մեկն է հանդիսանում յերկաթուղային և ջրային տրանսպորտը։

Յերկաթուղին, վորը իր տեղափոխությունների պլանը կազմել է բամբակի քաղի պլանավորված պլանի սկզբում, այժմ վոչ մի կերպ չի կարող բավարարել նրան ներկայացրած պահանջները։ Մյուս կողմից բամբակի բարձելու և թափելու ժամանակ առաջացող պարապուրդները արգելք են հանդիսանում առանց այն էլ անբավարար քանակությամբ վագոնների շուտ յետ դառնալուն։

Դրա համար էլ, բարձելու և թափելու տեմպերի արագացումը, բեռնակիրներին պրոգրեսիվ գործարքայնության անցկացնելը, վագոնների բարձելու և դատարկելու համար հատուկ կոմսոմոլական բրիգադներ կազմակերպելը, կայարաններում հատուկ հսկիչ պոստեր կազմակերպելը՝ առձերն յեղած բոլոր դատարկ վագոնները բամբակի տեղափոխման համար ոգտագործելու և բամբակային բեռների փոխադրությունների շարժման վրա հսկելու—պետք է կարևոր խնդիր հանդիսանա, դրա հետ միասին պարտադիր կերպով պետք է ավելացնել վագոնների թիվը բամբակային բեռները տեղափոխելու համար։

Դրա հետ միասին, անհրաժեշտ է լուծել զտած բամբակը ավելի ուժեղ մամլելու խնդիրը, վորը նույնպես կարող է նպաստել յերկաթուղային տրանսպորտի ռացիոնալ ոգտագործմանը։

Անհրաժեշտ է մեծագույն չափով ոգտագործել Քուռ գետի հնարավորությունները՝ հնդավոր և զտած բամբակը տեղափոխելու համար։

Այստեղ էլ, ինչպես և յերկաթուղային տրանսպորտում, բարձելու և դատարկելու գործում անհրաժեշտ է պրոգրեսիվ գործարքայնություն մտցնել, անդադար հսկողություն սահմանել բամբակ բարձած շոգենավերի և բեռնատար նավերի արագընթացության վրա։

Բամբակի տեղափոխման հարցերում մինչև այժմ չի զգացվում մեքենա-տրակտորային կայանների կազմակերպչական դերը։ Բայց չե վոր մեքենա-տրակտորային կայաններն առաջին հերթին պարտավոր են պայմանագրերի և պրոգրեսիվ գործարքայնություն մտցնելու հիման վրա, բամբակի տեղափոխությունների համար գործի քաշել ռայոնում յեղած բոլոր

տրանսպորտային միջոցները։ Բեռնատար և ավտոտրանսպորտի հետ միասին, մեքենա-տրակտորային կայանները պարտավոր են բամբակի տեղափոխելու համար մեծ չափով ոգտագործել այն տրակտորները, վորոնք զբաղված չեն աշնանացանի աշխատանքներում։

Անձրևային շրջանի մոտենալու պատճառով առանձին սրությամբ և կանգնում ճանապարհների դրության հարցը։ Ճանապարհներ չունենալու դեմ պայքարելու համար անհրաժեշտ է հենց հիմա մոբիլիզացիայի յենթարկել ռայոնի բոլոր ուժերն ու ներքին միջոցները։

Ճանուղիների վարչությունը, ռայոնական կուսակցության կոմիտեները և ռայոնական գործկոմերն պետք է ըմբռնեն, վոր յեթե կառավարության վորոշած ժամկետին—հոկտեմբերի 20-ին, միջոցներ ձեռք չառնվեն բամբակային ռայոնների ճանապարհների կառուցումներն ու նորոգումները կատարելու համար, նրանք կարող են հանդիսանալ բամբակի պլանի խանգարման հանցավորներ։

Ուշադրություն բամբակի տեղափոխմանը—բամբակի ֆրոնտի պայքարի կարևոր ողակներից մեկին—բամբակային պլանի իրացման պայքարում։ (Բակ. Բաբոչի» թերթից)։

9. ՊԵՏՔԸՐ ՀՈՏԿՈՒՐԹՅԱՆ ՀԱՄԱՐ—ՊԵՏՔԸՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ

41.—Պարտավորացնել կոլխոզների վարչություններին, ամեն մի քաղից հետո, ստուգել բրիգադների կատարած աշխատանքի լավ հատկությունը, և ժամանակին կատարելու համար պրեմիա տալ՝ 25%-ի չափով, վորպես լրացուցիչ հավելում աշխատորերին, իսկ ժամանակին չկատարելու և վատ հատկության համար—աշխատորերը պակասեցնել։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրժողկոմխորհի ոգոստոսի 12-ի վորոշումից)։

42.—Հասունացած բամբակը ներկայումս «հարվածում է» ռայոնական և կենտրոնական կազմակերպություններին։ Դրանից հետևում է յեզրակացությունը, վորը միանգամայն ճիշտ արել է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը, թե՝ «բամբակաքաղի կամպանիայի սկզբում վճռական ետապում ամենափոքր դանդաղումը խոշոր կորուստներ և սպառնում բամբակի հավաքմանը»։

Վոչ մի կիլոգրամ բամբակ չպիտի կորչի. հոկտեմբերը դարձնենք բամբակաքաղի վճռական ամիս—ահա բամբակային պլանի իրացման համար մղվող բոլշևիկյան պայքարի լոզունգները։

43.—Պայքարը կորուստների դեմ—հանդիսանում է բամբակաքաղի կամպանիայի կարևոր խնդիրներից մեկը։

Հոկտեմբերին դաշտերից հավաքել տարեկան պլանի 80%-ը, այսինքն 140,000 տոննա—դա նշանակում է Խորհրդային Միության տեկստիլ գործարաններին տալ 50,000 տոննկ զտած բամբակ, դա նշանակում է աշխատավորությանը տալ միլիոնավոր մետր մանուֆակտուրա։

Վոչնչացնել բամբակի կորուստները—դա նշանակում է աշխատավորությանը տալ նոր հարյուրավոր և հազարավոր մետր մանուֆակտուրա։

Կորուստների դեմ պայքարը պետք է համառ կերպով տարվի բամբակաքաղի և հանձնման ամբողջ ժամանակամիջոցին։

Սկսած բամբակային դաշտից և վերջացրած բամբակազտիչ գործարանի զտած բամբակը մինչև տեկստիլ ֆաբրիկանները հասցնելը—պետք է պայքարել կորուստներ թույլ չտալու համար։

Կորուստների դեմ պայքարը, դա առաջին հերթին—պայքար է բամբակի հատկության համար։ Տեղերից ստացվող տեղեկություններից հայտնի է, որ մի շարք ռայոններում գնման կետերին հանձնելու ժամանակ շատ է պատահում չհասած ու խոնավ բամբակ։

Դա ահագին կորուստ է հասցնում և ազդում բամբակի թելի հատկության վրա։

Պետք է լայն բացատրել և պայքար մղել չհասած բամբակը քաղելու դեմ այն պատճառով, որ չհասած և խոնավ բամբակը առանց չորացնելու տաքանում և փթում է։

Պետք է նմանապես վճռական պայքար մղել բամբակը կնդուղներով քաղելու դեմ, ինչպես այդ անում են որոշ ռայոններում (իսկ հետո բամբակը կնդուղներից աղտոտում են տանը)—դա աղտոտում և վատացնում է բամբակի որակը։

Ընթացիկ տարում բամբակի պահեստներ կառուցելու գործի պարզ անբավարար լինելը, իսկ մի քանի դեպքերում նույնիսկ կառուցումների խանգարվելու պատճառով, անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել՝ գնման կետերից հնդավոր բամբակը առանց ընդհատման բամբակազտիչ գործարաններն տեղափոխելու համար, ուր բամբակը պահելու համար հարմարություններն ապահովված են։

Գործարաններում շենքերի պակասության դեպքում բամբակի պահելը պետք է կազմակերպել վոչ-բամբակային կազմակերպությունների պահեստների շենքերում։

Բամբակային գործարաններում բամբակը մշակելիս շատ է կեղտոտվում յուղից։ Դա նույնպես վատացնում է բամբակի թելի հատկությունը, ավելացնում է կորուստները տեկստիլ ֆաբրիկաներում։ Այստեղ հիմնական պատճառը հանդիսանում է աշխատավորների անփութությունը, տեխնիկական աշխատավորների կազմի թույլ հսկողությունը, գործարանի բանվորների մեջ բացատրական աշխատանքների բացակայությունը։

Պայքարը բամբակի կորուստների դեմ, քաղի, տեղափոխման և զտելու ժամանակ կազմակերպությունների ուշադրության կենտրոնում պիտի լինի։

Վոչ մի գրամմ կորուստ—պետք է բամբակի պլանի համար մղվող պայքարի անբաժան մասը լինի։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

44.—Գնման կետերի պատրաստ չլինելը, մի քանի դեպքերում ծածկոցների բացակայությունը, բարդանների սակավությունը, նրանց ուշ վերադարձը, բամբակի տեղափոխման համար բանուժի և տրանսպորտի թույլ կազմակերպումը—այդ ամենը ճեղքված առաջացրին քաղի և հանձման մեջ և կոլխոզներում և բամբակաբույծների տներում և առանձնապես հեռավոր կետերում բամբակի կուտակումների խոշոր սպառնալիքի տակ դրին։

Անմիջապես վերացնել բամբակի քաղի և հանձման մեջ առաջացած ճեղքվածքը, մոբիլիզացիայի յենթարկել ռայոնների բոլոր ներքին միջոցները, բոլշևիկորեն տանել կոմսոմոլական և պրոֆմիութենական արշավը՝ բամբակի տարալի համար, ամբողջ հավաքած բամբակը անմիջապես հանձնել գնման կետերին։

Վոչ թե այն, ինչ որ հավաքված է, այլ ինչ որ հանձնած և գնման կետերին—դա է հանդիսանում պլանի կատարման չափանիշը։ («Բակ. Բաբոչի» թերթից)։

10. ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՎՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀՅՈՒՍԻՍԻՍՏԻՆ ԿԱՎԿԵՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՈՒՍՏԻՐԸ

45.—Հոկտեմբերի 5-ին Բագվի կազմակերպության բոլոր բջիջները քննության առան Ադրկոմկուսի (բ) կենտկոմի վորոշումը և բամբակաքաղին ոգնելու համար մի շարք գործնական միջոցառումներ նշեցին (բրիգադներ ուղարկել, սովխոզների համար բանուժ հավաքել, տարալի ժողովարարություն, յենթաշեֆ կոլխոզներում մանկամսուրներ և հրապարակներ կառուցել և այլն)։

46.—Չորրորդ յեռամսյակում, դեկտեմբերից վոչ ուշ՝ մենք պարտավոր ենք ավարտել 175.500 տոննն բամբակի քաղն ու մթերումը՝ այսինքն, 3 և կես անգամ ավելի, քան անցյալ տարի եր մթերված։

Բագվի կազմակերպությունը ներկայումս խոշոր քաղաքական կամպանիա է ծավալում՝ կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքների իրացման ինքնաստուգման շուրջը։ Այդ ինքնաստուգումը պետք է ների իրացման ինքնաստուգման շուրջը։ Այդ ինքնաստուգումը պետք է ամենասերտ կերպով կապված լինի կոլխոզների ու յենթաշեֆ գյուղերի հետ կնքված պայմանագրերի իրացման կոնկրետ ստուգման հետ։

Ընկ. Ստալինի ցուցմունքների հիման վրա վերակառուցվելովնոր ձևով Բագվի հիմնարկությունները, Բագվի պրոլետարիատը, պրոֆմիութենական, կուսակցական և կոմսերիտական կազմակերպությունները պետք է սովխոզներին, մեքենա-տրակտորային կայաններին, կոլանմիջապես ոգնեն ընկ. Ստալինի ցուցմունքների խոզային և մենատնտես գյուղացիությանը՝ իրացման հիման վրա, պայքար կազմակերպեն բամբակի բերքի հավաքման համար։

Վերացնելով անդիմությունն և հավասարանքը մեր ձեռնարկներում—շեֆային բրիգադների միջոցով պետք է պայքար կազմակերպել անդիմության, թյան ու հավասարանքի դեմ սովխոզներում, կազմակերպել աշխատանքը, կոնկրետ կերպով ցույց տալ, թե ինչպես պետք է վերացնվի հավասարանքը, բրիգադների և գործարքայնություն մտցնելու, դարձրանի ու անդիմությունը, ոգնելու հոդամասերին ամրապնդելու միջոցով։

Ձեռնարկներում անտեսհաշվային բրիգադներ կազմակերպելով ու հերթափոխ-հանդիպակած պլաններ մտցնելով—պետք է ոգնել կոլխոզնիկներին կազմակերպել պլանը մինչև առանձին հոդամասերը և ամեն մի կոլխոզնիկին առանձին հասցնելը և այդ պլանների հիման վրա կազմակերպել բամբակաքաղը։

Պայքարելով ձեռնարկում տնտեսհաշիվ մտցնելու համար—պետք է ոգնել կոլխոզներին՝ կազմակերպել յեկամուտը կոլխոզնիկների մեջ աշխատորերով բաժանելու սկզբունքի կիրառելուն։

Ձեռնարկում ներքին միջոցները մոբիլիզացիայի յենթարկելով,—պետք է հատուկ նամակներ գրել յենթաշեֆ կոլխոզներին, հատուկ ուղարկվող բրիգադների միջոցով, 25-հազարականների միջոցով պետք է հաջողացնել այն, որպեսզի բամբակը դաշտերից հավաքվի մինչև վերջին կնդուղը, վճռական պայքար մղելով չհասած բամբակի քաղելու և բամբակը բամբակաբույծի տանը կուտակելու դեմ։

Ձեռնարկում պայքարելով բանուժի հոսունության դեմ,—պետք է այդ կապակցել՝ կազմակերպված կերպով բանուժ հավաքելու հետ՝ յենթաշեֆ կոլխոզների հետ պայմանագիր կնքելու միջոցով։ Այդ վերջին միջոցառումը գանձ կլինի ընիկ ազգություններից կադրեր պատրաստելու գործում։

Բագվի ձեռնարկներում տարվող ընկ. Ստալինի դիրեկտիվների իրագործման մասսայական ինքնատուգումը շաղկապելով Ադրբեջանի գյուղին կոնկրետ ոգնություն հասցնելու հետ, ձեռք բերենք նոր հաջողություններ նավթի, բամբակի, կուսակցության հիմնական գծի համար տարվող պայքարում, հաղթահարելով աջ ոպորտունիստների և նրանց «ձախ» դաշնակիցների դիմադրությունը։ (Ընկ. Ռուբանովիչի հոդվածից—«Բակ. Բաքոչի» թերթում)։

47.—Ադրբեջանի բամբակային դաշտերում ծնունդ առած և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից պաշտպանած սոցիալիստական բուկսիր կազմակերպելու գաղափարը լայն արձագանք գտավ կոլխոզային մասսաների մեջ՝ գարնանային բամբակացանքսի ժամանակ։

Բոլորը հիշում են բոլշևիկյան կռիվների որերը՝ ներսի և միջազգային սոցիալիստական բուկսիրի ոգնությամբ, վորպես սոցիալիստական ոգնության բարձրագույն ձև՝ իր ժամանակին (մայիսի 10-ին) ցանելու՝ պլանով նախատեսված (205 հազար հեկտար) տարածությունը։

Առաջին ետապի հաջողություններից Ադրբեջանի կազմակերպությունը անցավ յերկրորդին—բամբակի բերքի համար պայքարին։

Ճիշտ է, մի շարք ռայոններ բավականին հետ մնալով, բայց այնուամենայնիվ ամենայն տեսակի դեմոբիլիզացիոն տրամադրություններ ու ոպորտունիստական գործնականի հետ անշեղ պայքարելու հիման վրա—մենք արդեն մոտենում ենք մշակման կամպանիայի վերջին և մտնում ենք յերրորդ՝ Խորհրդային Միության բամբակային անկախության համար տարվող պայքարի վճռական տարին։

Քաղել և մթերել 175.500 տոն հնդավոր բամբակ—ահա Ադրբեջանի կազմակերպության բամբակի համար տարվող պայքարի մոտակա մարտական խնդիրը։

Պայքարը բամբակի համար մեզ մոտ ընթանում է դասակարգային կռվի սրված պայմաններում։ Այդ պայքարում աճում են կոլխոզային գյուղացիության շարքերը, կատաղիորեն դիմադրում և դասակարգային թշնամին։

Ադրբեջանի բամբակային ռայոններում գյուղացիական տնտեսությունների 55 տոկոսից ավելին կոլլեկտիվացման ենթարկված։ Տասնյակ հազար կոլլեկտիվացրած բամբակաբուծների հզոր առաջխաղացումը Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ, կուսակցության վերջին դիրեկտիվների հիման վրա՝ ապահովում են համատարած կոլլեկտիվացումն 1932 թ. Ադրբեջանի հիմնական բամբակային ռայոններում և դրա հիման վրա կուլակության վերացումը։ Այդ կռվի մեջ խոշոր տնտեսական-քաղաքական նշանակություն ունի ընկ. Պոլոնսկու՝ Ադրբեջանի ռայոնների վրա Հյուսիսային Կովկասի սոցիալիստական բուկսիր կազմակերպելու մասին առաջ քաշած առաջարկության իրագործումը։

Հյուսիսային Կովկասը—Խորհրդային Միության համատարած կոլլեկտիվացման առաջին շրջանն է, վորը համատարած կոլլեկտիվացման համար

մղած պայքարի արդեն խոշոր փորձառություն, կոլխոզներում աշխատանքի ներքին կազմակերպման հարուստ փորձ, և հետևապես, կոլխոզային շարժման ամրապնդման մեթոդներ ունի։

Կարողանալ լայն կերպով ոգտագործել Հյուսիսային Կովկասի փորձը Ադրբեջանի դաշտերում - դրա մեջ է բամբակային ռայոնների համատարած կոլլեկտիվացման համար մղվող պայքարի հիմնական ողակը։

Այսոր մեզ մոտ յեկան՝ գործնական ցուցմունքներ տալու և կուտակած փորձը գործադրելու համար՝—Հյուսիսային Կովկասից 250 լավագույն ակտիվիստ կոլխոզնիկներ։

Ադրբեջանի բոլոր կազմակերպությունների խնդիրն է—անմիջապես դեկլարացիաներից ու բանաձևերից անցնել Հյուսիսային Կովկասից մեզ ոգնության յեկած սոցիալիստական բուկսիրի ցուցմունքների իրականացման և մեծագույն չափով ոգտագործելուն։

Բուկսիրի ոգնությամբ—պայքարի յելնենք 175.500 տոնն հնդավոր բամբակի համար, կոլխոզների ամրապնդման ու զարգացման համար։

(«Բակ. Բաքոչի» թերթից)։

11. ԱՆԽՆԱ ՊԱՅՔԱՐԵԼ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ—ՑԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ Վ

48.—Բարձրացնելով կոլխոզային և չքավորա-միջակային մասսաների դասակարգային աչալրջությունը, ել ավելի համախմբել նրանց կուսակցության ղեկավարության տակ՝ կուլակության վրա վճռական հարձակում գործելու համար, անխնա պայքարելով աջ և «ձախ» ոպորտունիստների—կուլակության ագենտուրայի դեմ,—բամբակային ռայոնների կուսակցական և լակության ագենտուրայի դեմ,—բամբակային ռայոնների կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն 1931 թ. բամբակի բերքի հավաքելու և մթերելու պլանների բոլշևիկյան կատարումն ու գերկ

կազրերը, վորոնք կայուն կերպով պայքարում են բամբակի համար, հետևապես և կուսակցության հիմնական գծի համար։

Ցեվ բամբակի մշակման և հավաքման ընթացքում մենք ստիպված կը լինենք պայքարելու ոպորտունիստական տարրերի դեմ, վորոնք կփորձեն արգելք հանդիսանալ, խանգարել բամբակի համար տարվող բոլշևիկյան պայքարի տեմպերը։

Բամբակի համար տարվող պայքարի տեմպերը խանգարողների ուղղակի ոգնականներն, ոպորտունիստական տարրերի զինակիցներն եին—ինչպես այդ ներկայումս միանգամայն ակներև է—անսկզբունք գրուպովշչիկները, վորոնք փորձում եին կազմակերպությունը հանել նավթի, և բամբակի համար տարվող լարված պայքարի գծից, խանգարել նրա գործնական աշխատանքը։

Ադրբեջանի, և նրա առաջավոր գնդի—Բաքվի կազմակերպությունը, վորը Բաքվի Կոմիտեի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Արդրյերկրկոմի ղեկավարությամբ կարողացավ մերկացնել անսկզբունք գրուպովշչիկներին, բամբակի համար մղվող պայքարի վերջին վճռական ետապում իր շարքերը մաքրելով սկլոչ-իկներից, գրուպիրովշչիկներից ու ոպորտունիստներից, Խորհրդային Միության բամբակային անկախության, կուսակցության հիմնական գծի համար տարվող պայքարում կարող և նոր հաջողություններ հասնել։

Ամենավճռական պայքար պլանի իրական լինելու ոպորտունիստական թերահավատության դեմ, հեղափոխական բոլշևիկյան տեմպեր, ոպորտունիստական ինքնահոսի, «ձախլիկ» ճնշումի, մերկ վարչարարման և մենատնտեսին թերագնահատելու փոխարեն—սովխոզների բանվորական մասսաների, կոլխոզային և մենատնտես գյուղացիության ակտիվության լայն մոբիլիզացիա՝ սոցմրցության, հարվածայնության և սոցբուկսիրի հիման վրա—և հաղթանակն ապահոված կլինի։

(„Բակ. Բաբոչի» թերթի առաջնորդողից)։

51.—Բամբակաքաղի հոկտեմբերյան պլանի կատարումը ռայոնների ճնշող մեծամասնության մեջ անցնում է անբավարար և հենց դրանով վերատնգի տակ է դնում՝ նոյեմբերի 1-ին տարեկան պլանի 70-80 տոկոսը գնման կետերին հասցնելու նշած պլանի կատարումը։

Ինչումն են բերքահավաքի և բամբակը բամբակային գործարաններին հանձնելու անբավարար ընթացքի հիմնական պատճառները։

Բամբակի մթերման անբավարար ընթացքի հիմնական պատճառը կայանում է նրանում, վոր չնայած Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 1-ի և ՎԵԿԱՊԵ-ի Անդրյերկրկոմի հոկտեմբերի 4-ի վորոշումներին՝ պլանները վերանայելու և մինչև կոլխոզներն ու մենատնտեսներին հասցնելու մասին—այդ դիրեկտիվը մինչև որս չի կատարված։

Մինչև այս, մի շարք ռայոններ չեն անցել բամբակաքաղի և հանձնելու բոլշևիկյան տեմպերին։

Ոպորտունիստական ինքնահոս—բամբակաքաղի բոլշևիկյան կազմակերպման փոխարեն—ահա վորտեղ է նշած տեմպերից սուր կերպով հետ մնալու արմատը։

Մթթե փաստ չէ, վոր մի շարք ռայոններում, չնայած Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի վճռական հրահանգին՝ նոր պլանները վերանայելու և այն

մինչև կոլխոզներն ու մենատնտեսներ հասցնելու մասին—այդ հրահանգը մինչև որս չի կատարված։

Մթթե փաստ չէ, վոր այն ժամանակ, յերբ Սալյանի, Գյոքչայի, Ադդաշի և մի շարք ուրիշ ռայոնների կոլխոզնիկները արդեն ոյալ կերպով իրականացրել են Ալի-Բայրամլվի ռայոնի կոլխոզնիկների առաջ քաշած նորման՝ ամեն որ քաղել 42—46 կիլոգրամ հնդավոր բամբակ,—ռայոնական կազմակերպություններն այդ նորման չափազանցրած են համարում և եյակազմակերպությունները այդ նորման չափազանցրած են համարում և եյակազմակերպությունները այդ նորման կոլխոզների մեջ արմատավորելու և պես վոչինչ չեն անում այդ նորման կոլխոզների մեջ արմատավորելու և գրա հիման վրա՝ պրոգրեսսիվ գործարքայնությանն անցնելու համար։

Մթթե մինչև այժմ «ոպորտունիստական ինքնահոսի հերոսներին» հասկանալի չէ, վոր մնալով արտադրանքի նորմաների ցածր մակարդակի վրա և հենց դրանով կոլխոզներում բանուժի դեֆիցիտ ստեղծելով, այդպիսի վոչ ղորմելի ղեկավարները հենց դրանով ոգնում են կուլակին, վորը համառորեն ձգտում է խանգարել նշած բամբակային պլանը։

(«Բակ. Բաբոչի» թերթի առաջնորդողից)։

52.—Անհրաժեշտ է հասկանալ, վոր բամբակաքաղի տվյալ ետապում փոքրիկ դանդաղկոտությունը, անշնորքությունը, ինքնահոսի վրա վորևե հույս դանդաղկոտությունը կարող են նպաստել միայն կուլակին, դասակարգային թշնամուն, վորը կատաղի կերպով դիմադրում է ծավալուն սոցիալիստական հարձակմանը, փորձում է արգելք առաջացնել, խանգարել բամբակային ֆրոնտում ունեցած մեր հաջողությունները։

Միայն ամենավճռական պայքարը՝ կուլակի և աջ ոպորտունիստների բանակի ագենտուրայի դեմ, վոր սկզբում չեին հավատում պլան ոյալի լինելուն, իսկ հիմա վախենում են բերքահավաքի ու հանձնման դժվարությունները, միայն անդադար պայքարը, պայքարը «ձախլիկ» խոտորումների դեմ, սուսկ վարչարարությամբ մասսայական աշխատանքները փոխարինելու դեմ—կարող է մեզ ապահովել բամբակի քաղելու և մթերելու նշած պլանի կատարումը, վորն անբաժան մասն է կազմում այն պայքարի, վորը տարվում է բամբակային ռայոններում 1932 թ. համատարած կոլեկտիվացման անցնելու և այդ հիման վրա կուլակությանը—վորպես դասակարգ վերացնելու համար։ («Բակ. Բաբոչի» թերթի առաջնորդողից)։

ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՎԻՓԵՑՆՈՒՄ ԵՆ ՔԱՂԻ ՄԵՔԵՆԱՑՈՒՄԸ

53.—Կարա-Զալա.—19 հոկտեմբերի.—Կարա-Զալա սովխոզում բանվորների պակասության պատճառով, բամբակաքաղի մեքենայացումը անձնապես մեծ նշանակություն ունի։ Այս տարվա բամբակաքաղի համար բերված են բամբակ քաղող 20 մեքենաներ։ Բայց այդ մեքենաներից աշխատանքներում ոգտագործվում են ամերիկյան «Տուրման Վակկում» ֆիրմայի 2 մեքենաները, իսկ խորհրդային արտադրության մնացած 18 մեքենաները քանդված դրության մեջ դարսված են սովխոզի պահեստում։ Ինչպես պարզվում է, այդ մեքենաները սովխոզ են հասել առանց մասերի։ «Տուրման Վակկում» ֆիրմայի մեքենաների աշխատանքի փորձը լավ հետևանքներ ցույց

տվեց։ 6 բանվորներով 25 բոպե աշխատանքի ընթացքում հավաքված է 45 կիլոգրամ։ Այդ նշանակում է, որ 10 ժամ բանվորական որվա ընթացքում կարելի է հավաքել 900 կիլոգրամից ավելի բամբակ։

Բայց առաջին փայլուն արդյունքներից հետո՝ մեքենան սուր կերպով իջեցրեց արդյունքը, 6 բանվորով 10 ժամվա աշխատանքի ընթացքում 80 կիլոգրամ հավաքեց։ Այդ բացատրվում է նրանով, որ իր ժամանակին կադրեր չէին պատրաստված, աշխատանքի արտադրականությունը չափազանց ցածր է. բացի դրանից, գործարքայնության բացակայության պատճառով բանվորները շահագրգռված չեն բարձր արտադրականության մեջ։

Ներկայումս սովխոզում մեքենայացման հակառակորդները շատ ազդեցիկ են, քան թե բարեկամները։ Բայց դրանում մեղավոր է ոչ թե մեքենան, այլ հենց իրենք—փորձնական աշխատանքների ղեկավարները. մեքենաները դնում են վատ հողամասերում, ուր այնքան էլ խիստ չեն ցանված և կնգուղները շատ փոքրաթիվ են։

Բամբակաքաղի մեքենայացմանը ոպորտունիստական վերաբերմունք ցույց տվողներին պետք է ջախջախիչ հարված տալ։

54.—Այն ռայոնները, որոնք իսկապես պայքարում են կուսակցության հեռնական գծի համար, ցույց տվին բոլշևիկյան աշխատանքի որինակներ, ապացուցեցին պլանների լիովին կատարելու և գերակատարելու հնարավորությունը, Կասում Իզմայիլի և Կարյագինի ռայոնի բոլշևիկները բոլշևիկյան կատաղության, հաստատակամության և համառության որինակներ ցույց տվին բամբակաքաղի կամպանիայում, կարողացան կազմակերպել կոլխոզային և չքավոր-միջակային մասսաներին, և դրա համար էլ հոկտեմբերի 7-ին տվին տարեկան պլանի 63 տոկոսը, գրավելով առաջին տեղն Ադրբեջանում։ Կասում-Իզմայիլի ռայոնը արժանացավ հանրապետության փոխանցիկ կարմիր դրոշին։

Միևնույն ժամանակ, մի նման հավասար պայմաններում, նկատվում է Կարադոնլիի և Կուտկաշենի ռայոնների խայտառակ և անթույլատրելի հետ մնալը։

Կարադոնլիի և Կուտկաշենի ռայոնների ղեկավարները վիժեցնում են ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրկերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի կարևորագույն վորոշումը, որ ակտիվ կերպով ոգնելով Թշնամուն—կուլակին, վորը փորձում է խանգարել բամբակաքաղի ընթացքը։ Այդ ռայոնների բոլշևիկները պարտավոր են ճեղքվածքը վերացնելու համար անմիջապես մոբիլիզացիայի ենթարկել բոլոր կազմակերպություններին ու կոլխոզա-չքավորական մասսաներին։ Նրանք պարտավոր են ապահովել կուսակցության վորոշման կատարումը՝ կոլխոզնիկների ու մենատնտեսների 100 տոկոսով աշխատանքի դուրս գալու մասին, ամենայն կերպ բարձրացնել աշխատանքի արտադրականությունը, ապահովել բարձրացրած նորմաների կատարումը, ծավալել մասսայական աշխատանքներ, սոցմրցություն և հարվածայնություն, բուկսիրի վերցնելով հետ մնացողներին, կուլակին ստիպել վոր նա բամբակը հանձնի պրոլետարական պետությանը, կանգ չառնելով խիստ միջոցների առաջ՝ չարամտորեն բամբակը չհանձնողների նկատմամբ։ (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի բրիգադի ղեկավար ընկ. Կոզլովի հոդվածից)։

55.—Ինչով են բացատրվում 5-րդ հնգամյակի ամոթալի արդյունքները. Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 1-ի և 2-ի դիրեկտիվների՝ աշխատունակներին 100 տոկոսով բամբակաքաղի մեջ գրավելու, կոլխոզներում գործարքայնության արմատավորելու հարցերի բացառապես անբավարար, թույլ կատարումով, միայն ոպորտունիստների դաղտնի սաբոտաժով ու չկամությամբ, վորոնք չեն հավատում իրական լինելուն և փորձում են իրենց անգործունեությամբ խանգարել բամբակային պլանի իրացումը. միայն դրանով կարելի է բացատրել մի շարք ռայոնների առաջավոր ռայոններից սուր կերպով հետ մնալը, վորոնք բոլշևիկորեն պայքարում են հոկտեմբերյան վճռական պլանի կատարման, Հոկտեմբերյան հեղափոխության 14-րդ տարեդարձին տարեկան ամբողջ պլանը կատարելու համար։

Ամենորյա մասսայական աշխատանքի փոխարեն—մերկ վարչարարություն։ Բարձրացրած նորմաների հիման վրա պրոգրեսսիվ գործարքայնության արմատավորելու փոխարեն—ոպորտունիստական խոսակցություն՝ բանվորական ուժի պակասելու մասին—ահա թե վորտեղ են արմատներն այն պատճառների, վոր առանձին ռայոններում—Կարամարյանի, Ախսուի, Գյոքչայի և մյուսների—աշխատունակ ազգաբնակության միայն 30—40% և դուրս գալիս բամբակաքաղի։

Պետք է ուժգին զարկել նրանց, ովքեր սաբոտաժի են ենթարկում Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրկերկրկոմի բամբակի մասին վորոշումների կատարումը։ («Բակ. Բարոչի» թերթից)։

ՀՍՍՌ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՈՍՍԻՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ

<< Ազգային գրադարան

19-252

Erməni dilində

AK (b) F Mərqəzi və BK-nin Metod Burosy

PAMBYG JЬGЬMЬ KAMPANJASЬNЬN VƏZIFƏLƏRI

Qənd firkə xətti uzrə firkə məarifi tapşırığı